աթոռոյն և աթոռկնոց չեմք ունեցեալ բնաւ զկմս յայտնելոյ՝
անարժան համբերելով որ̅ վն̅ անուան սարդարի, նոյնպէս և վն̅
անուան աթոռոյ և մեր ամենեցուն. Բայց զի 'ի վն̅ այնքան
տարաբախտութեանց աթոռոյն և մեր ամենեցուն՝ չունելով
զմիտ զ. բասուլիճան Ջաֆար խան հրամանատարն ընդհանուր
կառավարութեց 'ի դրան բարձրագահ սարդարի, անողորմ բռնա-
նակալութբ յոչնչացոյց զայն ամ̅ անտանելի անարգութիւն նաև
'ի վն̅ նշքեցելոց որք եկեալ եղբարց միաբանութե մերում,
զի գնացեալ կնքեաց զդրունս նոցին և յառաջադրեաց կամ



խոս

խոստանալ ՚ի մասին մնացորդ կայից երկոցուն նշ 15 · հզր Թումանս, և յինքեանք բանալ զդրունսն, և կամ ոչ մերձենալ ՚ի կնիքսն իւր · և ՚ի չլինել վրդպտաց միաբանութե մերոյ յանձնառու մք 15 · հզր Թումանի, բացեալ յինքն զդրունսն նոցին փոխանակ 15 · հզր Թմնին զոր պահանջէր յինքն ՚ի միաբանից աթոռոյն, տուեալ էր յինքն ՚ի մասին պարտաւորութեց աթոյն յաղ կայից երկուց հանգուցելոյն՝ միայն որպէս զականջոն յաշխարհէ, և զայլսն ամ խուրացուցեալ յինքեան որպէս և ունի մինչև ցայսօր ժամանակի. քանի հզր Թումանի ոսկի զանազան սիկկէ՝ արծաթ դրամ, ոսկեղէն, արծաթեղէն, դոհարեղէն և զանազան Թանկագին նիւթեղէն, ընդ որս և զկմսն սեպհական՝ Թանկագին էլմաս մատանի, ժամացոյց և այլ բզմ ինչ· և ոչ բաւականացեալ այնու ևս՝ զվրդպետ աշակերտ միում ՚ի ննջեցելոց կապեալ քար ՚ի մէջ ծնկացն և արկեալ զնա ՚ի մէ երեսաց ունելով այնպէս ցցեալ զոտսն, տուեալ էր ծեծել չարաչար մինչև ընկալեալ էր զբաւական գումար ևս· այլև զաշխարհական պաշտօնեայ և աղքական միում ՚ի ննջեցելոց՝ այլ անլսելի սարսռելի տանջանօք տանջեալ էր ՚ի մէջ բնակարանաց Սլթնղկսին, որպիսի անտանելի զրկանք և նեղութիք և անարգութիք ՚ի շինութեց աթոյ էջմիածնի մինչև ցայն ժամանակ բարերար իշխանութեց ձերում բարձրագահութե, յամ ժամանակս նախանցեալ իշխանաւորաց բարերարաց կամ չարարաց աթոյն՝ չէ երբէք յառաջացել կամ լսելի եղել բնաւ· Նալ յայսմիկ պատահման ևս գտաք մեք ամենեքին լռեալ նոյնպէս, ոչ կարելով բանալ զբերանս մեր ընդդէմ յաջորդին աշխարհահռչակ գործոց և շնորհակալութեց մերոց· Բայց ՚ի մէ այն անօրինակ զրկանաց և նեղութեց ննջեցելոց և կենդանեաց մերոց՝ երբև անխնամակալութե պատուոյ ընդհանրական աթոռոյ ամ հայոց և քննակոխ տաճարի սբյ էջմիածնի՝ և այնպիսի անգթութե առ խղճալի հոգևորականսն նորին համարձակեցաւ ծերապատիւ միրզայ ջապպարին ևս՝ սուր առնուլ ՚ի մէջ աթոռոյն և սրահար առնել զբզմս յեպսպոսաց և ՚ի վրդպտաց, որոց լուրն տարածեցաւ յականջս ամ հեռաւորաց և մերձաւորաց զանազան ազգաց · յետ այնորիկ՝ ըստ որում



անսա

ամանակոց է յառաջ 'ի գլխոյ և 'ի մորթել ընկերացն, արտածել դարձեալ այլոցն նաև 'ի փայլակնային մահու բղձմ անհաւատք խաբեանց մը խաբեանց հետևել զենմանցն և քերթելոյն զկնի նոցա: Խարկադրեալ եղէ ես պահպանել զպատիւ ազամայ որդւոյն և մարդկային բանականութեան, թէպէտև իցեմք համարեալ յայլոց վրդովք և տկարամիտ անձինք. ուստի 'ի մէջ աւետարանական հրամանացն յոր հաւատացեալն եմք. թէ Այս օր առիցէ զչարն բարի և զբարին չար: Ոչ ես կարողացեալ լուել յետ այնչափ հաչակեալ չարեաց բազմացելոց 'ի վերայ ամթոյ և մխտարանութ մերում՝ առաւելապատիկ յուսով խօսիլ 'ի մէջ աքքայափայլելոյ հովանաւորութեց և բարերար հոգացողութեանց արեգակնափայլ ժառանգի անւրուն պարտից, փութացայ ամենախոնարհաբար խնդրագրով խմով դիմել 'ի ներքոյ պաշտպանութեց հզօր ձեռին նր՝ ծանուցանելով նորին բարձրութեն մը ծանր ծանր նեղութեց և վշտաց և մը անտանելի անարգութեց հասելոց մի զկնի միոյ 'ի մը կենդանեաց և ննջեցելոց եղբարց իմոց մխտարանութեց ամթոոյ էջմիածնի, ամենեւին անխառն 'ի ստութեց և 'ի զրպարտութեց կատարեալ ճշմարտութք. ունելով մը ամենայնիւ կենդանի իմոց մտաց զաւետարանական բանն Քրի Յսի իմոյ, թէ՝ Որ սուտ խօսի, հայր նր սատանայ է. Այլ ընդ այնմ խնդրեցի 'ի նորին արեգակնափայլութէ մը իմ իմոց գանգատանաց՝ ոչ ինչ կամենալ հարցանել յիմ վրդովմանց որք դատանին յաթոռն էջմիածնի, այլ հարցանել այնոցիկ որք դատանին արտաքոյ 'ի տէրութե ռուսաց և օսմանցւոց և կամ պահանջել յինէն զը օրինի զհարկաւորս մը ապացուցութեց ճշմարտութեան և ստութե իմ գրելոցն յինէն. բայց ընդդէմ իմ յուսոյ իմոյ առ նորին արեգակնափայլութիւն և ընդդէմ ամենայնի խնդրանաց իմոց, ընկալայ ես այժմ զհրովարտակ խորոյ բարձրութեն արեգակնափայլ ժառնգի անւրուն պարտից. թէ կոչեցի ես յաթոռ էջմիածնի զեփրեմ վրդովման և նա եկեալ մը իմ գրելոցն 'ի ձեռն դատաւ անհամաձայն, և ոչ ես ընդ զանեղի, և յայժ անհամաձայն եղեն գրութիք ձեր և բանք վրդովմանն: Այս ես ահա հրամարեցայ յիմ մասնակցութեանց իմոց ընդ վրդովմաց եղելոց յաթոռն



էջմի

էջմիածնի։ Իսկ յաղագս ծերունի Կաթուղիկոսին զի հրամանեալ էիք դարձուցանել զնա յաթոռն սրբ էջմիածնի, ես գոլով ծառայ նորին՝ և նա գոլով տէր իմ, զինչ եմ ես կարող կամ՝ պահել զնա ընդդէմ կամաց իւրոց և կամ տանել։ բայց միթէ բանական մարդոյ վայելեալ և հաւատալի է, զի յորժամ տեղին նստելոյ գտանիցէ այնտեղեալ՝ լաւ համարի կալ ՚ի մէջ ուխտից իւրոց կանգուն, և ոչ կարէ նստիլ առանց նախ մաքրելոյ զտեղին. այսպէս և նորին բարձրագահութիւն յետ մեր բազմապատիկ նեղութեանց և անարգութեանց իւր և աթոռոյ էջմիածնի և մեր մատնութեանց իւրոց՝ իւրային ընդ լուծն վասն ապստեղելոյ զկաթուղիկոսարան աթոռոյ էջմիածնի, ընտրել է համարեցաւ կալ յաւերակին հաղբատայ վանից քան յանմաքուր պալատան Կաթողիկոսարանի իւրոյ՝ ուր և ինքն իսկ քանիցս գրել ունի առ նորին արեգակնափայլութիւն։ Յետ որոյ յառաջ քան զկորուսանել մեր արժանաւորութեանց իւրոց, կարծեմ թէ ոչ կարողանայ նորին բարձրագահութիւն վերադառնալ յաթոռն էջմիածնի։

Բարեխօսակն ձեր

Խոնարհ ծառայ Տէր Ներսէս հայոց
Արքեպիսկոպոս Աշտարակեցի։

1824 ապրիլի 15։
՚ի Թիֆլիզ։

## Պատասխանագրութիւն Սրբազնագոյն Կաթողիկոսին առ միաբանութիւնն Սրբոյ Էջմիածնի։

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Եփրեմ և շնորհիւ նորին Կաթողիկոս ամենայն հայոց, և ծայրագոյն Պատրիարգ Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի, նա և գերահրաշ Սուրբ Աթոռոյ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի։

Սրբազան միաբանութեան սրբոյ էջմիածնի առաքեմ



ող

զողջոյն Յոհաննու խնդալ 'ի տէր այժմ և միշտ։ Յայտնեմ համանգամայն և զշնորհակալութիւն իմ յԼ̃գս ջ. ըմեռանդութեանց և հարազատութեանց ձերոց զորս զգամ բաւականապէս։ Նաև զի յառաջադրելով մեզ զանցիցն զորոց գրեալ էիք 'ի 28. անցեալ ամսեանն ապրիլի՝ յորդոր լինիք գալ առ ձեզ. եթէ դիւրին էր այնպէս գալն իմ առ այժմ, իսկ ընդէ՞ր ուրեմն ելանէի ես 'ի սմէյ գաւառէն. ուր կանխաւ յառաջ անձնընծայ բոլորապէս՝ եկեալ էի 'ի ծառաց Տ̃ի։ Գիտէք և դուք, եթէ ապահովութիւն կենաց իմոց բաւական էր ինձ անդէն, ուստի 'ի ձեռն դարձեալ հրաւիրեցայ գալ Կայսերական մեծաշուք ուղարկաւորութ̃. այլ զի հզօրագոյն ընդ յառաջ ելին տարաբախտաբար, այն է՝ զի ոչ առանց մեծագոյն ցաւոց և խոր տրտմութեց և ոչ առանց բանաւոր ընտրութե պարտաւորեցայ դիմել յայսկոյս 'ի համառօտել զխնամսն վերաժամանեալ ո՛չ յայտ է։ Իսկ արդ մեք որ միանգամ օգտակարագոյն նախադատութ̃ յանձն արարաք զանձինս մեր յուսալի հովանաւորութեանց իւրոյ Կայսերական մեծութ̃ն՝ ոչ ևս մարթանամք ըստ հաճոյս անձանց վերադառնալ կամ մերովս յաղթահարեալ փոփոխամտութեամբ կամ ձեռամբ հարկադրող ստիպմամբ։ Նաև զի յառաջարկութիք նորին բարձրագահութ̃ գերաշուք սարտարին ձեզ՝ զգալի են այնպէս, իբրու զի կամի նա յառաջադրել ազգին՝ զայլ ոք ընտրել 'ի նորոյ Կթ̃ղկս և պատրիարգ փոխանակ մեր. ես երանելի զանձն իմ համարիմ, և դուք մի՛ ընդ առ այն զվիշտ յանձինս ձեր բերջիք՝ փոխանակ զի գտանիցի առ հասարակ երանական իմն բարեբախտութ̃ հաստատեալ յայնժամ, յորժամ ազգն Հայոց ազգային իմն հայրենասիրութ̃ զարթիցէ 'ի ջատագովութի Հա̃կ ուղղորդացն և կարևորագունիցն իւրեանց յԼ̃գս պաշտպանութեան սր̃բ եկեղեցւոյ և բարեկարգութեց, յորոց միայն ո՛չ 'ի սեպհական տղերաց՝ յուսալի է վայելել զա̃մ զբարութիս, համանգամայն և զմեծ վայելչութիւն հոգևորականաց և մարմնաւորականաց մերազնեաց. և առանց յատուկ փութոյ նոցին՝ միանակք և ժառանգութիք ա̃մ վանորէից և բնակից հոգևորականաց մեր են հնացեալ, յորս անշքացեալ առ հասարակ հեծեմք և երկնչիմք

'ի ժա

'ի ժամանակաց յաւիտենից առաջինք, միջինք և վերջինք. Ապաքէն ես այժմ զայս ձեզ աւանդեմ, զի դուք ամենեքին ընդ ձերոց պարտաւորութեանց բարեպաշտ կամօք աշխատեալ միաբանից հոգ կալջիք միաբան սիրով յանձանձել զիրեարս և գտանել պաշտպան կառավարութեց Ռ. Թոռ.յն, մինչև համաձայն յառաջադիմութեանց բարձրագահ սարտարին եղիցի տնօրէնութբ ընդհանուր ազգին ոչ մն մեր, նոյնպէս և մն ձեր և մն զօրականաց և նորին գերագահ պատրիարքական Աթոռոյ ամ Հայոց և մայր եկեղեցւոյ Կթղկէ Էջմիածնի։ Ողջ լերուք և շնորհք տեառն եղիցի ընդ ձեզ և ընդ հոգւոյդ ձերում միշտ. ամէն.

բարեացակամ ձեզ
Կաթողիկոս ամ Հայոց
Եփրեմ.

1824. մայիսի 12.
'ի սբ նշանի վանս որ 'ի Հաղբատ.

## Պատասխանագրութիւն Արքեպիսկոպոսին Կաթողիկոսի գրեցեալ առ Սարգսի Եպիսկոպոսի.

Գերաշուք բարձրագահ Սարտարի հզօր տէրութեան պարսից առողջութի և կեանք եղիցի երկարութն ամաց բազմաց.

Պատուելագոյն գիր ձեր առ իս ընկալայ 'ի ձեռն մեծապատիւ աղայ քեաղիմին և աղայ խաչատուրին և ծանուցեալ զորս 'ի նմա, ես և լուեալ 'ի բանից բերանոյ նոցին զոր միանգամ խօսեցան ոչ 'ի դիմաց ձեր բարձրագահութեն յանձնեցեալ ինքեանց. շնորհակալ եմ մինչև յոյժ մն ամենայնի բարեշնորհութեանց ձերոց առատացելոց առ իս. Այլ վասն հրաւիրելոյդ զմեզ յաղգս վերադառնալոյ այդր յաթոռ սբ Էջմիածնի, գոլով յառաջագոյն գրեալ առ արեգակնափայլ ժառանգն տէրութեան պարսից Աբբաս միրզայ շահզադային որ առաքեցեալն է առ նա 'ի ձեռն նորին բարձր գերադանցութն Կուսակալի վրաստանու Ալեքսէ պետրովիչ երմոլովի,



և քա

և քանիցս ևս գրեալ առ ձեր բարձրագահութիւն է ժամանակէ ժամանակս , թէ ազգն Հայոց ինքեանք գիտասցեն հոգալ զպարժանաւորն վն Աթռյ Էջմիածնի և վն Կթղկութեան նր , այժմ ևս առաւել քան զայն չունիմք ինչ գրել ՚ի նորոյ , զի մեք առանց արժանաւոր տնօրէնութեանց ազգի Հայոց տարածե_ ցելոյ ընդ ամ սահմանս հովանաւորութ ամենայնից ռուսաց և պարսից , բազմօք գփոյծ առաք՝ թէ անձամբ և անձնական կարողութ մեր զոչ ինչ կարողացաք յառաջ բերել զբարիս և կամ զօգտակարս ոչ վն Աթոռոյն և ոչ վն միաբանութեան նր կամ՝ Հասարակութ ազգի Հայոց՝ որ վն և մեկնեցեալ այսպէս , ընտրելի համարեցաք մատուցանել զարտասուս մեր առաջի ամենողորմած մարդասիրութ Այ և մաղթել զշնորհ մեծ ողորմութեան նր վն փրկութեան հոգւոյ իմոյ և վասն այցելութեանց մեր տառապեալ իւրոյ քահանայից Աթոռոյ Էջմիածնի՝ և միաբանութեան նր և բոլոր սփռեցեալ ժողովրդեան նորին ազգի Հայոց որոց համարիմ զանձն իմ պարտաւոր միշտ.

Ողջ լեր և ես եմ և եղէց վասն կենաց ձերոց միշտ աղօթարար.

Արհիեպս ամ Հայոց
Եփրեմ.

1824 . օգոստոսի 6.
՚ի սբ Նշանի վանս Հաղբատայ.

---

## Պատասխանագրութիւն Սրբազնագոյն Կաթողիկոսի առ սբ ժողովն սբոյ Կաթողիկէ Էջմիածնի.

Յնի Քնի ծռյ տէր Եփրեմ և շնորհիւ նորին Կթղկս ամ Հայոց , և ծայրագոյն Պատրիարգ Առաքելական Եկեղեցւոյ Քնի, նա և գերահրաշ Մայր Աթռյ սբյ Կթղկէ Էջմիածնի.

Նուիրեմ զողջոյն և զսէր շնորհազարդ առ քեզ եպսաց պատուարժան անդամոց սբ ժողովոյն բարձրագոյն խորհրդա_



րա

բանի ուխտ Աթոռոյ և լուսոյ Մօր մերոյ․ Որոց և յայտ առնեմ, զի զրուցի ձեր առ ի յամենեսին յուղկալ առանց թղթոյ աւուրց՝ ընկալեալ 'ի ձեռն մեծապատուին աղայ քեռազեմին և աղայ խաչատուրին․ և ծանեայ, որոց ոչ դուք և ոչ մեք չէաք երբէք անծանօթ։

Եթէ գալ մեր յԱթոռն՝ էր արդիւնաւորութեան իւիք ակնկալեալ բարեաց, իսկ ընդէ՞ր ուրեմն ընտրելի համարիւր մեզ այս վնասակ․ այլ զի բազում տարապարտութեամբ մերով արժանի գտաք տեսանել զամենայն անվայելչութիւն Աթոռոյ մերոյ և աթոռ֊այնոց 'ի ցաւս սրտի մեր և ամենայն հասարակութեան ազգի Հայոց, արժանի դատիմք հեղուլ այսպէս առաջի Տեառն զարտասուս ապաշխարանաց յանձնեալ նմա զանձինս մեր և զԱթոռ իւր սուրբ․ առ որս աւելի քան զգրեալսն մեր յառաջագոյն՝ չունիմք երկրորդել նոր ինչ։

Այլ և վասն մահուերին ստորագրեցելոյ 'ի ձէնջ զոր տուեալ էր ընդ իւր բարձրագահ սարտարն 'ի դաւրէժ, և 'ի վասն այնր եւս յաւելեալ անդէն ինչ ինչ՝ ստորագրել էք նորօք զնոյն զի առաքեսցեն առ ազգն Հայոց 'ի կոստանդնուպօլիս․ կանխաւ յառաջ և մեք իսկ զընտրութիւն մեր 'ի նմին կայացուցեալ վասն յուսացեալ բարեաց և վայելչութեանց, այն է՝ զի ձեզ և իւրոյ բարձրագահութեան հզօր իշխան Սարտարի փութացաք գրել յամենայն աւուրն 15․ Եթէ Ազգն Հայոց ինքեանք գիտասցեն, որպէս և տնօրինել յօժարեսցին վասն արժանաւորութեան ընդհանրական Աթոռոյ Էջմիածնի և Կաթողիկոսութեան նորա։

Իսկ զի գրէք հոգ կալնուլ վասն վճարելոյ զպարտսն այսորէն կամ այդր, և եղիցի յայնժամ գալն մեր ըստ կամաց մերոց․ դուք ինքնին իսկ վկայ էք, զի ես իսկոյն զնոյն խնդրական հիմն բարեաց վասն անձին և Աթոռոյ և ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց մերոց Ջանասիրելով, անդէն 'ի Ղարաբաղ՝ յառաջ քան զամենայն պատուաւորել զԼ, երանէս արք եպիսկոպոսն՝ զանձն նորա ենթադրեցաք այնմ ծանրակրութեանց փոխանակ մեր ամենեցուն․ որպէս և նա ինքն գտեալ կարեկից իսկապէս և ստանձնեալ կամաւորութեամբ՝ ինքնին իսկ խնդրանօքս եղև գրով առ տիրօղ Ատրպատականի Աբբաս միրզայ ժառանգն հզօր տէրութեան



պար

պարսից, հրաման տալ ինքեան կարգադրել զհոգեւորականն Ս. Աթոռոյն ըստ արժանաւորութեան իւրաքանչիւրոց այլ և զկառավարութիւն Աթոռոյն ըստ վայելչութեան նորին առանց ներհակութեան այլոց. և առնել վասն պարտապահանջից զարժանաւոր տնօրէնութիւն՝ զի կամ ՚ի Թիֆլիզ կամ անդէն ՚ի Թէվրէզ ՚ի ներքոյ վերահայեցողութեան իւրոյ բարձրութեանն զհաշիւ արարեալ ընդ ամենեցուն ՚ի ձեռն երկուց պարսկաց ընտրեցելոց ՚ի պարսիկ պարտապահանջից՝ և երկուց հայոց ընտրեցելոց յինքենէ, որ ինչ և լինելոց իցէ մայր գումարն՝ տրեցեալ յումեքէ հատուցէ ինքն իւրաքանչիւրոց նորին զպահանջողութիւն նորին հանդերձ յինքենէ յարքայորդւոյն կարգադրել շահուքն։ Եթէ այդպէս էր կամք ձեր և ծանուցեալ բարին վասն ձեր և վասն Ս. Աթոռոյն, հարկ էր ձեզ ամենեցուն լինել ջատագով այնմ և ոչ Թողուլ զօգտակարն վասն Ս. Աթոռոյն և վասն հասարակութեան նորին։ Այլ զի յայնժամ չեղև հաճոյական ձեզ կամ այլոց այն տնօրէնութիւն մեր և անձնամատոյց լինելն նորա. այժմ ես որպէս այլով իրաւամբ պարտաւորեցից զնա ՚ի վճարումն պարտուց առանց ինչ գումարաց՝ միայն տուժելով զանձն իւր։ Իսկ եթէ զլսիցէք, Թէ կայցէ առ նա գումար հասարակական՝ և նա ոչ յօժարի հատուցանել զայն՝ գոլով անկարեկից ոք, և ես ընդ ձեզ խոստանամ լինել նմա վրէժխնդիր, և տալ նմա հատուցանել ընդ միոյ զբաղումս. այլ Թէ ոչ, վասն ամենայն իրաց հարկ է նախ խորհել և ապա առնել զբարին և զօգտակարն։

Ողջ լերուք և շնորհք Աստուծոյ ընդ հոգւոյդ ձերում այժմ և միշտ. ամէն։

բարեացակամ ձեզ ամենեցուն
Կաթողիկոս ամենայն Հայոց Եփրեմ.

1824 օգոստոսի 6.
՚ի Ս. Նշանի վանս
որ ՚ի Հաղբատ.

Պատասխանագրութիւն Ներսէսի Տէր Տեառն
առ որ ժողովն մեծ Կաթուղիկէ Էջմիածնի.

Գերապատիւ անդամոց մեծ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի մեր Կաթուղիկէ Էջմիածնի.

զԳրեալն ձեր առ իս յամսեանն յուլիսի՝ ընթերցայ. և պարտաւոր զանձն իմ համարեցայ գոհանալ զՏէր. Այլ եթէ արժան էր՝ գոհանայի և զձէնջ, յաղագս գեղեցիկ յառաջադիմութեանց ներգործութեանցն սարտարի ձերով գործակցութեամբ՝ զորոց նկարագրեալ էիք. եթէ զմահաբերական նամակագրութիւն մեր 'ի մասին փոխարկութեան սրբազնագոյն Կաթուղիկոսի տարեալ բարձրաստիճան սարտարն ընդ իւր 'ի դարբնէ՝ ցուցեալ էր փոխարքային, ընդ որ հաճեալ և նորին հրամայեալ էր պատճառել զնոյն 'ի ներքին սպասաւորաց իւրոց՝ և զնոյն 'ի մէնջ. և առաքել 'ի Կոստանդնուպոլիս՝ զի խօսեսցին ոչ միայն ընդ ազգին կամ ընդ ազգապետաց Հայոց, այլ ընդ տէրութեանն իսկ՝ յաղագս հօր հրամանաւ կատարելոյ զկամս նորին արփիափայլ տէրութեանն, և ընտրել զնոյն մի Կաթուղիկոսութեան. այլ 'ի գալ սարտարին յԵրևան՝ 'ի վերայ բազում խնդրանաց մերոց խնդրեցաք տալ մեզ և զժամանակ սասան աւուրց, մինչև գրեսցուք առ Կաթուղիկոսն և յայս նուագ՝ կամ գալ ինքնին, և կամ առաքել զհաստատութիւնս դրամն. յորս ասաց՝ և զմեզ յորդորեաց կամ թողուլ զսրբազնագոյն Կաթուղիկոսն զի եկեսցէ այդր հանդերձ ժողովեալ դրամովքն և կացցէ 'ի հաստատութեան իւրական պատուոյն, կամ թէ առաքել զդրամն և եթ՝ և պահպանել աստէն զԿաթուղիկոսն որչափ և կամք մեր հաճեսցին. միայն զի դուք զերծեալ 'ի պարտուց սոյն աղջիք աղտա.

Այլ զի ամենեքին անսովոր են այս իմ եղանակք բանից ձերոց և անտեղի մինչ իսպառ գրեալքն յիմում մասին, զանկամ լսել 'ի ձէնջ. նախ՝ եթէ յուսամք արդեօք հմտացեալք եթէ ես իմ որ չթողում զսրբազնագոյն Օծեալն նորին գալ առ ձեզ.


երկր

Երկրորդ՝ Թէ ուստի՞ որդեօք հանճարքն ժողովեալ նի՛ զբաւա-
ռու իւր · և Երրորդ՝ Թէ զլուխ եկեղեցւոյ ո՞վ և Կաթուղիկոս
ընդհանուր ազգի՝ այդպիսի Թէ ո՞րք զատանի վերապատուել
կամ պաշտպանեալ յօրինաց և ՚ի հաւատոյ քրիստոնէութե ·
Կամ այդպէս պարտին լինել արբանեակք իշխանք եկեղեցւոյ
և քարոզք հաւատոյ եպ՞ք և վրդ՞պք ։ Գրեալ իսկ է · ա՞մ որ
ոչ ՚ի հաւատոյ է · մեղք են ·

Դուք ինքնին իսկ ոչ կարէք զլանալ, Թէ նմանեալ
իցեմ երբեմն ես զանձն իմ կամ զանձնանս ՚ի մասին ԱԹոռոյն
կամ աԹոռոյնոց ։ Այժմ ո՞չ յառաջ՝ նոյնպէս և այժմ հայեա-
ցեալ ՚ի վտանգն հզօրացեալ ՚ի ձեռն համաձայն հնումն հաշա-
կեցելոյ սաղմոսարանաւն, տողիւ 78 · փուԹացայ կատարե-
լագոյն յօժարմամբ իմով սատանձնել զնոմ՝ զծանրութիւն
պարտուց և այլոցն հարկաւոր համարեցելոց յաղագս առա-
ջնորդութեանց աԹոռոյնոց, և վերանորոգութեանց եկեղեցւոյն
ԱԹոռոյն՝ արժանաւորութեանց և բարեկարգութեանց, ընդ որոյ և
ներկայացուցի ժառանգի տէրութեան պարսից զպատուական
եղբայրն մեր որդին Մարտիրոս այր եռանդն սինեալց՝ հանդերձ
գրովք բողոքմանց իմոց և խնդրմանց յաղագս աքրայակցելոյ
հովանաւորութեանց նորին առ այնս ։

Այլ զի դատն ձեր անհաւանոյք կամք իմ այնպիսի և
ջանք ՚ի մասին հասարակաց · Թախանձեմ զձեզ ամենայն
ոչ անգամ և զպատկառանացն իմոց պարտաւորութեանց յաղագս
պաշտպանութեան իւրոց Արծրունեաց Օծութեանն վերադառնալոյ ՚ի
ձախողական առ դիպելոյ նմին յօտարաց և յիւրոց · և մի հա-
մարել զիս բանադատող կամաց սրբութե նորին վն ոչ գալոյ
նմա այդր՝ ուստի մեկնեցեալն է յաղագս անբերելի չարեացն
հզօրանալոյ ։ Այլ եԹէ իցեն առ այն ձեր հրապոյրք այլոց,
ծանիջիք զայնպիսիսն Թշնամի արդարութեան՝ Թէ և զայլն
ես վերապատուեալ առաջնորդական կոչմամբ եղանակաց, կամ
լուսաւորեալ իմն հրեշտակային մարդակերպութբ · զանեալ ինձ
հաւատարիմ առ սոյն վկայութ իմ ՚ի վն Առաջնորդութեց նն
մերոյ և Տէ՞Թէ՝ Յուսան ՚ի հօրէ սատանայէ է ։ Այլ և վն
զբաւոյց ժողովելոց ում՞ և դրէքն · եԹէ ունիցիք ցուցանել ինձ,



ոչ

ոչ ասեմ, զի յարգելով զբան ձերում սբ ժողովոյ, փութա-ցայց հաճեցուցանել զմիտս իւրոյ վեհափառութեանն առա-քել խնկոյն. Այլ թէ իցեն բանք ձեր մն գումարաց ոմանց հասելոց առ մեզ և ոչ առ տէրութիւն նորին, վաղուրեմն հասել-են այնորիկ պարտապահանջից աթոռոյն՝ այդր, 'ի ղարաբաղ և աստէն, որոց կարող էք ձեզէն իսկ կշռադատել զհաշիւսն. և ըստ ժամանակի ընկալնուլ նաև 'ի մէնջ զգումար ամե-նայնի ստացելոցն և տրեցելոցն մեօք.

Այլ մն եղանակի դաշնակցաբար յառաջադրելոյն ձեր ամենապատուելի սրբութեան նորին կամ բերել ընդ ինքեան և կամ առաքել զգումարս դրամոց և կալ 'ի հաստատուն իւրական պատուոյն այդր կամ աստէն, դուք ձեզէն ընտրես-ջիք զարժանաւորսն ձերում հաւատոյ և կուսմանց, եթէ կա-րելի՞ իցէ յուսալ երբեմն այդպիսի պաշտօնատարութեամբ անճարկելի կանոնաց և անխորհուրդ խորհրդոց պաշտպանել զհաւատս, և արժանի գտանել սաղմոսել ըստ գրեցելումն. Տէ՛ր սիրեցի զվայելչութիւն տան քո և զտեղի յարկի փա-ռաց քոց:

Այլ զի գտանիք նեղեալ 'ի սակի ստիպմանէ ընկալնլոյն 'ի ձէնջ զպահանջմունսն չափաւոր խանի, այլ մն և յո՛գս ազդու-կացուցանելոյ զեղանակ պահանջմանն՝ գրել լինի. թէ 'ի գնալ գերապատւի եղբօր մերոյ առ արքայորդին 'ի Դաւրէժ, ոչ թէ լուեալ իցէ զհրաման բարձրութեան նորին՝ հատուցանել զդրամս առեալս 'ի նմանէ կամ 'ի դիւանէն ձիշտ հաշուա-տեսութեամբ. Հարկադրեալ լինիմ յիշեցուցանել այսմանօք առ սոյն. մի՛ թէ չէ՞ր արժան յայտնել յայնժամ նորին բարձր-ութեան, թէ յափշտակուեալ նր 'ի կայից երկուց արք եպսյն հանգուցելոց՝ եւս և 'ի կայից իմ ներսիսի՝ գտանին առ նո-քանի հազար թումանս. Այլ զի մն ցանկացել ապահովութեան կամ յաջողուածոյ իրիք 'ի ժամանակին յայնմիկ՝ լաւութեամբ եղբօրն, կամ ոչ գրէ առ ի նորին բարձրութիւն՝ ոչ տալոյն նր զտեղի գրելոյն յինէն յիմում բողոքագրի 'ի մասին այնպիսի յափշտակութեանց նր՝ ծածկեցեալ են 'ի տեսութեանց արքայորդւոյն այնպիսի զեկանք և վնասք աթոռոյն և աթոռայնոց, ուստի



առ

առ հաւատչեայ այլոցն ապադայից՝ Նախընծայ դատանիս այդ պտուղք անարժան խորհրդոց և գործոց. ըստ որոյ կոչեցեալ այժմ զքանի հազար Թուման Աթոռոյն զյափշտակեցելումն յառաջագոյն, յաւելեալ էք նմա և զկրաւուոս նեղելոյ զձեզ զամենեսեան այդպէս 'ի պահանջելն զնոցին՝ զբազմացուցեալն բռնամ խարդախութ, որ յայտնի են ինձ՝ Թէպէտև աստ ունիցիք չլինել յայտնի ձեզ.

Այդպէս ուրեմն հաւատարիմ եղեալ մեր տեառ հետեւեալցն զկնի, մի անփոյթ լինիլ աղաչեմ զմեր գրելոցն. Թէ՝ Աթեցեր զայնոսիկ որք պահեն զերկիւղ 'ի մնոտի. և մեր այնմ բարւոք խորհրդածութ խնամ ունելով մեր անձանց ձերոց և մեր լուսաւորչականաց հայոց, ոչ արժան համարել բերել յանարժանս այնոսիկս, որ այժմ յօժարեալ էք ընդ այսոցիկ զրուցեանց ձերոց առ ևերոյ ուրացնութին և առխ՝ ըստ հաճոյս նեղչաց ձերոց մատուցանել և առ կաւտակայն զբոզոք զինէն յաղագս ոչ Թողացուցանելոյ իմ զԷթեղկն վերադառնալ յաթոռն. և կամ ոչ առաքելոյ իմ զգումարս պատկանեալս Աթոռոյն զտացեալսն յինէն 'ի սահմանաց տէրութեան ռուսաց և օսմանցւոց՝ 'ի մձարումն պարտուց. Այնուհետև և յառաջ քան զայս ստորագրել զմահապարն առաջին, և յետ նր զուղղեալն այնորիկ յօգուտ ևերեանց անդ 'ի դաւրէժ՝ որոց շարք տողեցն ևերապանչևերոց մեր Սրբընկալդահոյի որ Էթեղկէ էջմիածնի և մեր տեառ հայրապետաց և մարմնաւորականաց ընդհանուր ազգի հայոց, առատահոս պղեւրք են ամենապատիկ չարեաց այժմ և յաւիտեան՝ և մեր մարմնոյ ձեր և հոգւոյ արձան նախատանաց. որք նշանակեն մաձառակաւք դատանեցեալք անդէն առաւել փչտագին կրել ևերեանց. Ոչ նոյն էր առաքելոյն՝ յորժամ առաջնորդ եղել դաւթի գերաստիճան հասան խան՝ ինքնին զնա կացուցեալ առ ջի այնր աքքայորդւոյն 'ի դաշտին խորվիրապայ՝ բևերաւոր 'ի վր իմ կաւտէին զբարուրանս ծանուցն և չարամտին՝ ոչ ինչ խնայեալ անձին իմոյ պարթուցանել 'ի վր զսուր նորին. և եԹէ շնորհն Ան ըստ անսուտ բարբառոյ ևերուն Աւետարանի. Թէ՝ Ողանիցիք զճշմարտութին և ճշմարտութիւնն ազա-

տես

տեսցէ զձեզ. ազատեաց զիս յայնժամ փոխանակ որոյ առ-
ընկալելով յանձն իմ զանուշատում շնորհ արդարադատութեց Ն̃ր և
առաւելապատիկ խնամոց և հովանաւորութեց, որովք և ընթացք
հովուերական կառավարութեց Ն. Թռ̃յն ժամանեալ էհաս յիւր
նպատակ փառաւոր՝ ուր և կարէ ընկալնուլ զվկայութիւն
դրուատեալ՝ գալստեամբ որին փափագելի սրբազնու̃ն տե̃ն
Եփրեմայ 'ի գլուխս երկուց ամաց, և բանիւք բազմաց։ Մի
թէ շնորհն այն որ զայնպիսի անօրինէր յայնժամ մեօք, չու-
նէր այժմ առաւել քան զնոյնս անօրինել ձեօք 'ի կամիլն ձեր
համաձայն օրինաց քրիստոնէութե̃ն մերոյ 'ի խնդիր լինել կարե-
ւորացն՝ օգտակարաց վս̃ Ն. Թռոյն և վս̃ ձեր ամենեցուն։

Գիտեմ ես՝ զի բանք իմ այսորիկ և գիր՝ ուղղ. անուշէաքն
տեմ լինելոց են արհամարհելք 'ի ձէնջ, այլ ես պարտաւոր զանձն
իմ համարելով գրեմ զարձեալ, և գրեցից որքան և զօրեցից՝
մինչև ձերդն իսկ առնուցուք զչափ ուր վս̃ առաջնոցն նոյն-
պէս և վս̃ վերջնոց. առ որ և մաղթելով զներողութիւն ձեր
յաղագս համարձին խօսելն կոչմանս որ յայսպիսիս զիս տանի,
եմ և մնամ ձեզ ամենայնիւ հարազատուք հոգւոյ և մարմնոյ
և մնալոց լինիմ միշտ 'ի սրտէ ջերմեռանդ՝ և ա̃յ մօրն իմ լուսոյ
որդի անձնանուէր.

Խոնարհ ծառայ արք. Առ̃ջն Հայոց
Վրաստանու Ներսէս.

1824. օգոստոսի 6.
'ի Թիֆլիզ.

## Յաւելուած.

Գրեր առ Աշխարհին մեծամեծաց առ Եղիշէ հոգւոյ ՚ի ... ։ ՚ի Աստուա-ծոյ մեծամեծաց առ Եղիշէ հոգւոյ ՚ի ... ։ Յաղագս ծանուցանելոյ ումանց ՚ի Հնդկաստանի։

### Ընդհանրական Աշխարհական տէր եղիս

### առաքելադրոշմ Հայկեան.

Ընկալեալ մերապատուական զգրեալդ առ ի յամենայնն յունիսի 20. յաւուր երկրորդի այսր ամսոյ․ և լուեալ զամն սեբերակեի Գէորգայ անուն մեծագին հոգւով չարչն ըկեման սուտ եղիա ձևանալոյն, և անամօթաբար յանդգնութե ձեռնադրելոյն յեկեղեցւոյ դաւառի յեղնիկայ քաղաքի դշխոյ անձինս ՚ի քահանայս՝ և աւելի քան զ50. յայլ վայրս աստիճանս կղերիկոսութեան, ոչ ինչ զարմացայ․ վասնորոյ զի անհոգութիւն Հայոց և անխնամակալութիւն ազգի և ժողովրդեան վասն եկեղեցւոյ որոյ՝ վաղու ես ընդարձակեալ են մի ամ այսպիսեաց զճանապարհ ամ ամպարշտութեանց։

Իսկ զի յանդգնաւղոյն լինի է ինձ բանս, առաջեմ ներողընելի հարազատ կարեկցուէ․ հաւատայեալ՝ թէ բղձալիքս եմ յաւէտ ըսծ ալ ՚ի մէջ ջատագովաւ Հայոց և Հայրէ Հայրենի ազգի և եկեղեցւոյ, և ոչ ըստ իւի զքանս իմ յանդուգն առնաւլն՝ ՚ի թշնամանս ինձ կարդել։

Գիտեմք կարի քաջ, եկեղեցի քո չինեալ ՚ի մէջ հիման առաքելոց և մարգարէից․ և նոյնս համբերձ՝ զեկեղեցի սոյն Գրիգորի մեծի պարթևի մեր լուսաւորչի՝ ճանաչեմք եկեղեցի քո․ այլ զանկամ ուստիկ՝ ով հոգեւոր Հովիւ, թէ ՚ի մէջ որոց հիմանց առաքելականց կամ մարգարէականաց գտանեն կարգաւորել ՚ի հարկիւրաւոր ամսոյ հետեւ՝ ընթացք եկեղեցական կառավարութեանց Հայոց։



զի

Գիտեմք, եկեղեցի քս̃ի ըստ օրինակի անդամոց մարմնոյ ՚յօդեալ և պատշաճեալ 'ի գլուխն իւր քս̃ . Այլ թէ և զեկե-ղեցի հայաստանեայց 'ի նմին յօդութեան պատշաճեալ ցուց-ցես, յերջանկական վիճակի զանձն իմ ապահովացուցես ։

Գիտեմք, հովիւ քաջ եկեղեցւոյ սր̃յ զգլուխն նորին՝ զտէր մեր Յս̃ Քս̃ . Եւ՛ լսեմք սքանչելի զբարբառ նորա . Ես եմ հովիւ քաջ . և թէ՝ Հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց ։

Իսկ ապա՝ լե՛ր ձեռնկալու իմոց մտաց 'ի սմին գայ-թակղութեան, թէ զեա՞րդ մարթ իցէ յայսմիկ զընթացս իւր ուղղել առ հովիւս հայկազանց՝ յորժամ տեսանի ա՛յն յան-դիման հօտ նոցին 'ի հզօրաց և 'ի տկարաց յափշտակեալ և ցրուեալ՝ իբրև զոչխարս որոց ոչ գուցէ հովիւ ։

Յայսմիկ ահա լի ցաւօք յանձն իմ տարակուսիմ . որով և առ յանդգնագոյնս ինձ բռնաբարիմ, յաղթահարել յա-հեղ բարբառոյ պատգամացն այ̃ս . Ո՜հ . հովիւք՝ որք զանձինս արածէք և ոչ զխաշինս ։

զՄտաւ ածեմ զելևէջսն հովուաց ինքնաշարժ բերմամբ ը̃ հաճոյս անձանց տարապայման ցանկութ̃ իւրեանց՝ անխը-նամակալութ̃ եկեղեցւոյ և անխնայութ̃ հօտին . և զարմանամ ը̃ յարատեւումն յաջողուածոց նոցին 'ի նմին, որոց փոխանակ նախանձախնդրութեան՝ ջատագով են միշտ ընդ ա̃մ տեղիս ժողովք ժողովրդոց՝ արդարացուցանելով զդրէնս վս̃ անձանց . Որք ունին զձեռն՝ բարերարք ձեր կոչին ։

Տկարանամ մինչև յոյժ՝ միտք իմ 'ի խորհրդածելն . թէ զի Ա̃ծայինն և պաշտելի է բարբառն . Ճանաչեմ զիմսն՝ և ճանաչիմ յիմոցն ։ Իսկ ը̃ ե՞ր ուրեմն 'ի հօտի քաջ հովուութ̃ նորին՝ ծանուցելոյ ա̃ծաբանեալ սիրալի ծանօթութեամբ՝ գտանին դարձեալ անհոգացեալք վասն վարձկանաց՝ որդիք հարազատք սրբոյ լուսաւորչին և եկեղեցւոյ սր̃յ նր̃ . յորոց վը-տանգին յաւէրժ ոչ նուազ քան 'ի թշնամեաց իւրեանց 'ի գայլոց կամ 'ի գողոց ։

Յափշուէ կրթին ապրեցուէք իմոց մտաց մինչ-խապառ, զի ա̃մ սեռի կենդանեաց՝ բարին և օգտակարն միշտ՝



կայ

կայ մնայ յարարչէ իւրեանց կարգեալ նպատակ՝ առ որ դի֊
մեալ գան 'ի սկզբանց յաւիտենից բանաւորք և շնչաւորք.
այլ ընդ հակառակն՝ և ոչ իսկ նպատակ անգամ նշմարի եր֊
բեք 'ի դարուց ժամանակաց՝ յառաջամատոյց երբեմն ընտրու֊
թեանց մնաց հովուեաց կամ հօտի հասարակութե մեր ազգի,
և այն իսկ շօշափելի յիմում խորհրդածութեան սկիզբն, յորմէ
ընդ յառաջ եկեալ բազմացան հետ զհետէ այնորիկ առ հա֊
սարակ՝ որք հրէշացուցեալ զառաջինն զգեղեցկութի պատշա֊
ճեալ յօդուածոց եկեղեցւոյ հայոց, կացուցին բազմագլուխ.
և հուսկ զկնի իբրև յօդուած միայն 'ի գլխոց՝ որով և շփոթ֊
եալ զամ զվայելչութի առանձնական կարգի անդամոց իւրա֊
քանչիւրոց, այլ իւրաքանչիւր դիմել հանդէպ իւրոց երեսաց՝
եթէ մին փութայ զպաշտօն հովուութե փառաւոր կացուցա֊
նել՝ և է շաւիղս ուղէղս զհօտ իւր առաջնորդել, վարձկանք
բազումք ստոճերակերպեալք հովուապէս՝ զօրէն հզօրեղամբ
ը կամս ցանկութեան սրտից իւրեանց զհովուեննսն յաջողա֊
ձեռն հարկանել, և այնպէս ապա դնելով զհօտն 'ի վերայ
անձանց՝ զախորժակ իւրեանց պարարել, ամ և ձայնն մարգա֊
րէական զատանի կանխաւ յառաջ առաւել բարձրացեալ.
Այլ ուտէին զժողովուրդ իմ ամ զկերակուր հացի, և առ ած
ոչ կարդացին.

Այս է որ խրամատեալ զեկեղեցի հայոց՝ և զրկեալ
զնա յերկնահանդոյն մեծ վայելչութենէ իւրոց, առ ցաւս սրտի
իմոյ տայ ինձ այժմ ամ յանդգնագոյնս ումանս զանձն իմ 'ի
վտանգի դատապարտութե բազմաց կացուցանել. իբրև զի լսեմ
և տեսանեմ հանապազ՝ թէ այր իւրաքանչիւր համարձակա֊
քայլ է գաւիթս սրբոյ եկեղեցւոյ, առնէ ամ և ախորժէ. և ոչ
ոքէ՝ որ հաճոյից նոցին ընդդէմ դառնայցէ, թէպէտև յա֊
մենեցուն կարէ լինել զգալի վտանգն հզօրացեալ, մինչև աղ֊
ուէսունք փոքունք որպէս և զրէթ՝ յարձակեալ անվեհեր
վստահուէ 'ի մէջ հրապարակեալ անհոգութեանց հովուաց
և անխնամակալութեց ազգի՝ զիշատեն այնպէս, մինչև արկա֊
նել զժանիսնա և յարմատս հաւատոց ժողովրդեն՝ և 'ի հի֊
մունս եկեղեցւոյ քրի և հօրն հաւատոյ սրբոյն գրիգորի.



և տալ

և տալ յապականութեն զմին զօրութիւն նոցին, ճերմակ գայլին լինել տանեց գանդուղ և այցելութեց. առ որ այսուհետև կայ մնայ քոտ հաղորդագին առ տիրական գլուխն եկեղեցւոյ մեր գձայն աղաղակի մերոյ բարձրացուցանել. Ընդ զօրութեանց դաւիճ հայեաց յերկնից և տես, այց արա այգւոյս այսմիկ և դարձո՛ն տար սմա. զոր տնկեաց աջ քո.

Ողջ լեր և ես եմ՝ և եղեց խնկական վերապատուութե ողջամիտ հաւանութեամբ ձերում արժանանձնութեցն՝ միշտ ձեզ բարեաղաչարար.

Խոնարհ ծառայ Սրբոյ Աթոռոյ հայոց
արքեպիսկոպոս Ներսէս.

1824. յուլիսի 10.
Ի Տփխիզ.

## Կ.ՆՔ.Զ.

## Պատասխանագիրն Ներսէս Արք Եպսի առ Յօհաննէս Արք Եպս Կարճեցի.

Գերապատիւ Յօհաննէս շնորհազարդ Արք Եպս

Սիրահոժակեալ եղբայր 'ի Քս Յս.

Յաղթահարեալ կրկուք մարդկան ճարտարաբանեալ՝ օգալը հարուածովք մտաց շարահիւսեալ գրովն ձեր առ իս յաւուր երեսներորդի անցեալ ամսեանն օգոստոսի, ընկալեալ 'ի 4. սոորագրեալ ամսոյս, փութացայ սաստկապէս՝ զգացեալ նովաւ զվտանգն նախապատրաստեալ ձեզ ձեօք՝ ոչ առանց թու- լատրութեան շնորհաց երկնից, և ոչ առանց թելադրութեան ոգւոյն չարութեան.

Եւ որ բռնաբարիմ 'ի պարտաւորութեն հաւատոյ և կոչմանց մերոց մաքուր փութակցութ հետևեցուցանել երգ- սոյն առ ձեզ. հայցմամբ պաղատանաց արժանաւորացն միջ- նորդութեց առ ամենաբաւականն Տէր՝ որ միայն զօրէ ընուլ զամ զլթերուն և զթխրութ մտաց և կամաց և հաճոյից ամ չափու և հասակի.

Սրբութն ձեր գրէ առ իս՝ թէ ընթերցեալ անդ 'ի Կա- լին զպատասխանագրութեան ձեր 'ի 10. և 'ի 14. յուլիսի, այն գէ գրեալ կէք թէ զտարակուսեալդ 'ի վր երկուց ճանապար- հաց թողաք և մեք 'ի կամս Տն և 'ի ձեր հաճոյս ուղղել զձեր գնացս. եզրակացութ ձերոց մտաց յայտնի ծանուցեալ այնու, և զմտաւ ածեալ զերկեղլի և զաներևոյթ օգուտն և վնասն տարաբախտիս, ուղղեցի յաթոռն զճանապարհ իմ. և յետ քանի աւուրց ըստ նորին բարձր հրամանի, այն է Սարտարի, գնացեալ 'ի տեսութ նր քանի եղբարբք, ընկալաւ զմեզ ոչ սակաւ շնորհս ցուցանելով. Զաւրն յայն օր և հարկաւորապէս Քեազիմ և Խաչատուր աղայքն եղբարբք. յորժամ և նորին բարձրութեն հրամայեաց պատրաստել զմահուէրատար և յղել 'ի մեծն Պոլիս ըստ առաջին մտաց. առ որ անկեալ 'ի ծունկս նորին՝ թախանձեցաք տալ ևս ժամանակ մինչև կրկին հասցէ



աղէր.

տղերս մեր առ ձեր որդուն․ Է որ օգնական եղեալ և յաջողէ տաճինք և մերազնեայք, եղև ներող և կատարիչ մերոց խնդր-ուածոց։ Ա՛ռ որ խոնարհեալ՝ խոնջեալ խորհրդական եղբարք Անտոնեանք, ոչ փառահացան կրկին աղերսարկու լինել առ-ձեր սբ. եղբայրուն․ այլ զհաճոյս Ածածնին բարեխօսել մարթացան՝ ընդ որոց և ես համաձայնեալ՝ պաղատիմ սբ. և անկեղծաւոր միոք․ մի՛ մեզ՝ մի՛ մեզ սբ. եղբայր, այլ անուան քում տուր զփառս․ ընկալ զաղաչանս աղաչաւորաց․ հաստա-տանելով զպարտս պարտաւորաց․ ո՛ հոգի եղբայր՝ մեք կա-կածոտ և երկիւղած անմիտ հոգեւորս ըստ բերմանցն մեղաց․ խնդրեմք, մի՛ տալ զպատճառս, այլ խնդրանաց մաղթողիս միայն լինել երաշխաւոր 'ի փառս այ և 'ի պարծանս բարձր անուան ձեր։ Նաև եթէ մաղթանք մեր լինիցին ընդունելի ձեզ, այն է որ հրամանաւ իշխողին տեղւոյս անտարակոյս գամ 'ի տեսութիւն և 'ի շնորհակալութիւն 'ի դիմաց նորին և մեր միաբա-նութեան, և յայնժամ լինին բազում յառաջածութիւնք և բարի բանք Ավ. եթէ ոչ իմ մեղաց լսելի չլինիցին աղերսս մեր՝ զոր տէր մի՛ արասցէ, հարկ է առաքել զՅովսէփ վարդապետն առ մեզ ընդ առ 'ի մէնջ տրեցեալ ձեռագրոյն վասն աւանդելոյն՝ զի 'ի ներկայութեան որոց և հրամայեսջիք, տեսցեն զհաշուեմն այլ աւան-դեցն՝ նոյնպէս և նուիրակութեան։ Այնպէս երանի ինձ լինի և լաւ ձեզ, եթէ տեսութեան արժանի լիցուք։ Այլև աւել պա-կաս բան թէպէտ շատ համանիցի յականջս ձեր 'ի մերս դի-մաց, բայց անփոփոխ կացջիք՝ մինչ 'ի պարզել պղտորութեան․ ըստ որում էլ աղքի չուղալ աղքի։ Ունիմք և այլ հարկաւոր գիտե-լի բանս պատուէրեալ բերանով այն գրաբեր Սիմէօնին յորմէ ունիք լսել և գիտել։

Տարաձայնութիւնք նախաստեղծիցն 'ի միաբանութեան իւրեանց, և միաբանութիւնք նոցա 'ի տարաձայնութեան իւրեանց՝ մեր-կեալ զնա յանպատում շնորհաց իւրեանց և 'ի բնաւից վայ-ելչութեանց, արարին անապատ զԱծատունկն եդեմ․ Արդ երանելի լիցուք թէ տարաձայնութիւն այս 'ի մերում միա-բանութեան, կամ միաբանութիւն 'ի տարաձայնութեան՝ ոչ նոյնպէս կալ-ցեալ և զմեզ, դղրդել ունիցին նաև զհիմունս Ածեղէն



հաս

հաստատունց սրբոյ Տաճարին Այ և մայր Աթոռոյ մեր Հայոց. Արդ որ յոյս միակ մնայ ինձ այժմ պաշտելի բարբառն Քնա-կան. Դրունք դժոխոց մի յաղթահարեսցեն զեկեղեցի իմ. Եւ առ նա հանապազորդեալ աղաչանք սրբոյ եկեղեցւոյ. Անշտ անշարժ պահեալ զԱթոռ հայկազնեայ.

Յամ առածս իմաստնոց վկայեալ լինի թէ՝ խորհր-դով և միաբանութեամբ շինի քաղաք և տուն. Եւ բան Տն գտանի բարձրացեալ. Ամենայն տուն բաժանեալ յանձն իւր՝ աւերի և թագաւորութի բաժանեալ յանձն իւր՝ կործանի.

Ապաքէն աղաչեմ զսրբութի ձեր յայտնել նախ ինձ զն խորհրդոց ձեր և մեր եղբարց խորհրդականաց, և զն միաբա-նութեանց յօդելոյ 'ի խորհուրդս նախադասեցելոյ յաղագս բարուց սրբոյ Աթոռոյն և աթոռակալի նորին Ածարեն Օծուն վերստագնելոյ յիւրումն ծաղկեալ ծերուն և հաստատութեան հոգևորականաց և մարմնաւորականաց նոցին. և այնպէս առա հրաւիրել զիս 'ի պաշտօնատարութի այնմիկ ձերոց խորհրդոց և միաբանութեց. և կամ հրատարակել զինէն զինչ կամք իցեն ձեր կամ այլոց.

Այլ զի ձեռն Տն երևի մնեալ 'ի միաբանութի մեր, արդ ահաւասիկ մատուցանեմ ձեզ զնկարագիր հարազատութ խորհրդոց իմոց և կամաց. Բողոք իմ առ արեգակնափայլ ժա-ռանգն տէրութե Պարսից և առ գերապատիւն բարձրագահ Սարտարն զն մեր զրկանաց և յափշտակութեց և նեղութեանց վերաժամանելոց Աթոռոյն և Տն մերում և եղբարց միա-բանութեան կենդանեաց և ննջեցելոց տպեալ և արձանա-ցուցեալ՝ յորս տեսանէք և զտկարութի իմոց թիկանց ինձէն իսկ կամակար յօժարութե իմով խոնարհեցուցեալ 'ի ներքոյ ծանրութեանց բազմագումար պարտուցն հատուցմանց, յոր այժմ դուքդ ախորժէք ենթադրել ձերով թախանձանօք.

Տեսանէք նոյնպէս և զն տարաձայնութեց ձերում միա-բանութե 'ի նմին՝ վկայեալ 'ի նորին բարձրութե Արքայորդւոյն.

Մատուցանեմ ընդ այնմ և զօրինակ գրութե իմոյ առ ձեզ յամի 1818. յունվարի 22, որով խնդրեցի յայնժամ ծանուցանել ինձ, թէ յետ վաղճանի իւրոյ՝ զոր մասն հոգւոյ



իւրոյ

իւրոյ ում յանձնեաց բարեյիշատակ Պաւլոս Հայրն, որոյ մին-
չև ցայժմ ոչ արժանացայ ընկալնուլ զդարձն։ Կցորդեմ Է
նմին և զօրինակ գրուեն իմոյ յետ նորա առ 'ի հաւատարիմ
կացուցանել զայն նախազդեցուն իմ ձեզ. համանգամայն և
նորոգել դարձեալ այժմ զնոյն գուշակ իմ ձեզ, թէ ոչ ևս
'ի հիացումն և 'ի սքանչացումն այլոց, այլ բողոքանդեօ ինձ 'ի
կորուստ և 'ի կործանումն անձանց և Աթոռոյ մեր Հայոց
ունիք կարգել զերկուս ձեր յայսմհետէ 'ի ձերում տարա-
ձայնութեան և միաբանուէ։

Առաքեմ առ ձեզ և զօրինակ գրուեն ձեր առ իս
ձերով խնկական մատամբ յամի 1820. յունիսի 19. որով 'ի
ձանապարհորդելն ձեր հրապարակաւ յաղագս ազատութեց
Աթոռյն 'ի պարտուց, առանձնաբար ևս գրէք առ իս։ Ներ-
քին դիտաւորութիս իմս, եթէ յաջող մնացուք 'ի Պօլիս, և
գտցուք շնորհս 'ի նոցունց, այն է որ մեր փոխարկութիւն լինի
Ս. Վ. Թողցուք եղանակ բանին, միայն առանց այլևայլ կար-
ծեաց մէ և մաքուր մտօք տուր ինձ զխորհուրդ՝ Հոգդի մէ,
թէ յո՞ր մի արկցուք զկիձակն։ Մէ խորհուրդ է՝ զոր տամ
ձեզ խորհրդաբար. ուրեմն հաւատոմ բանիցս և տուր ինձ խոր-
հուրդ մէ, յստակ և ամբիծ, զի արասցուք ըստ այնմ։ Եթէ
փոխարկութի չլինիցի սմա, անհնարին է այլ իմն եղանակաւ
զսպել զսա և կամ զերծ կացուցանել զԱթոռն յանտանելի
պարտուց. Նայլն։ Եւ թէ զԵփրեմ Աղուա Թողուլ կամիմ,
զի ոչ առաւել ընդարձակ լիցի աւերէ Տէր մեր. և զերկրորդ
աւերէ Անօքեանն տանել անօրինեցաք։

Ներկայացուցանեմ Է նմին և զօրինակ գրուեն առ
նորին Մեհափառութին 'ի Պրուսայ քաղաքէ 'ի 25. նոյեմբերի
այնր ամի, ստորագրութ ձեր և գործակցաց ձերոց երկուց
Աստուածանու Տեր Աչպացն՝ որում ևս յառաջադրելով զայլս
նեքքին խորհրդածութիս ձեր, խնդրէք կամ պատուել զայն և
կամ պահել 'ի ներքոյ փականաց իւրոց՝ զի մի ձայնն հասէ
այսր 'ի Թիֆլիզ, խափան լիցուք մեք այնմ բարեխորհրդուեց
ձերոց՝ ոմ և եղեալ եմք յառաջագոյն։

Եւ 'ի մէ այսոցիկ ունիք առ ձեզ զմահապետագրութեն՝



որոյ

որոյ յառաջ քան զսուրբս ընկալայ ես 'ի Կարնոյ վաճառա-
կանաց զօրինակն հասեալ առ նմ 'ի Թէֆլիզոյ. յորում գրեալ
էին՝ թէ քանի ամօք յառաջ զօրքն Ռուսաց ընդ զօրապետութեամբ
Գեներալ Նեսվետայովին եկեալ յԱթոռս՝ կողոպտեալ
տարան զամենայն ոսկեղէն և արծաթեղէն անօթսն Աթոռոյն. ընդ
որոց գնացին և բնակեցան Երևանու՝ 'ի պատճառս որոյ պա-
կասութիւն պատահեցաւ միոց Աթոռոյն, և մն ինչ ինչ շինուա-
ծոց հարկաւորաց՝ յառաջացան պարտք. որոյ աղագաւ գնացեալ
Կաթուղիկոսն 'ի Ղարաբաղ՝ կոչեալ էին անդր և զՆերսէս Վար-
դապետ Առաջնորդ Տփխիսոյ՝ որում յետ համայն խորհրդա-
ծութեան յանձնեալ Սրբազան Կաթուղիկոսն զամենայն զկառավարութիւն
ձեռագրով՝ զի բաց յանուանէ Կաթուղիկոսութեան այլ ամենայն գործա-
դրութիւնք և կառավարութիւնք եղիցին կախեալք 'ի կամաց նորին. և
յօրէ յայնմանէ Ներսէս Առաջնորդն սկսաւ հաւաքել զամենայն
արդիւնս Աթոռոյն յամենայն քաղաքաց և յամենայն կողմանց՝ որպէս թէ
ունիցի հատուցանել զպարտսն. իսկ այժմ երկու տարի և կէս
եղև՝ այլ ոչ պարտքն հատուցան և ոչ Կաթուղիկոսն վերադար-
ձաւ. զի խորհրդականք Աթոռոյն Կաթուղիկոսին ոչ օգուտ հա-
մարեալ զվերադարձումն, խնդրեցին քանի ամիս ժամանակ.
այլ ամիսն տարի եղև և ոչ հատուցան գումարք պարտուցն
և ոչ վերադարձաւ Կաթուղիկոսն. այլ յայտնի է մեզ և ամենե-
ցուն՝ զի պատճառ այսմ ամենայնի է Ներսէս Առաջնորդն, որով
և երբէք լինել ոչ կամեցօղ բարեաց Աթոռոյն. և զոր կարէն,
ոչ ունի խնայել յայսմ մասին. և այլն. Ունէք նոյնպէս այդր
առ ձեզ և զօրինակ գրութեանն եղբարց խորհրդականաց սրբոյ
Աթոռոյն առ Կուսակալ կողմանցս յանցեալ ամսեանն յու-
լիսի կամ՝ օգոստոսի՝ որով գանգատեն զմէնջ համաձայն գրե-
ցելումն 'ի մահուէրի իւրեանց՝ թէ Ներսէս Եպիսկոպոսն ժողովեալ
յամենայն քաղաքաց իւրաքանչիւր սահմանաց զարդիւնս Աթոռոյն,
ոչ զպարտս Աթոռոյն հատուցանէ և ոչ զԿաթուղիկոսն թողու
գալ յԱթոռն։

Ընկալայ ես այժմ նաև զայլ գիր անդուստ 'ի Կար-
նոյ. որով գրեն առ մեզ՝ թէ բարձրացաւ ձայն սրտնջման
թէ յԱթոռայնոց և թէ յայլոց՝ իբրև թէ դուք արդեն և



խափան

խափան եղեւ մեծի տենչանաց Սրզն Տն մերոյ 'ի սբ Աթոռն վերադարձման, ընկալեալ իցէք 'ի նմանէ յետկար հրաժարման 'ի Կաթողիկոսական գործառնութէ. և ոչ եթէ նորին Սրբութեն թախանձանօք և արտասուօք անգամ խնդրեալ է և խնդրէ 'ի ձէնջ՝ թոյլ տալ ինքեան գնալ 'ի սբ Պահն. այլ դուք ոչ թողացուցանէք, ասելով թէ չունիս դու միւսանգամ տեսանել զնոյն տեղի, այլ այդրէն հիւծելոց են ոսկերք քո, և այլն։ Տեսի և զոմանս միօրինակ յերկոտասան գրութեանց ձերոց խորհրդական եղբարց Սինօթականաց առ երկոտասան անձինս է այսմիկ ձերոց առ իս ներկայ գրութեանց. յորս յամենայնի կամելով արդարացուցանել զանձինս և պարտաւոր կացուցանել զնորին Սրզնագոյն Մեծ Քահանայապետութեն՝ համարձակաբարբառ լինելն գրել. թէ հարցանիցէք ուստի կալաւ սկիզբն պարտուցս բարդութի, ոչ դանդաղեմք ասել ձեզ. զի նախ առաջին 'ի գալ այր Սրզնագոյն Քահանայապետին մեր՝ եբեր նա պարտս 'ի Ռուսաստանու, զոր առեալ էր վն գործոց Սբյ Աթոռոյս. զնոյն և յոլովութք դրամոց 'ի վս վերանորոգութեց տանեաց սբյ Տաճարին. բարդեցան 'ի վս այսոցիկ և զանազան ծախք ընծայից՝ զոր տայր Հոգևոր Տրն մեր ըստ հարկի պահանջմանն. այլ դուք մի զարմանայք 'ի վս պարտուցն, այն զի Սբ Աթոռն Էջմի գտանի 'ի ներքոյ եօթն հազար քսակ պարտուց. Ահա երեք ամք են գալոյ Կաթուղիկոսին այդր, յորմէ կարգեցաւ հոգաբարձու Նախապատիւ եղբայրն մեր Ներսէս Արք Աշտն վն ամ գործառնութեանց Աթոռոյն՝ է որ հանձնեցաք և մեք, ճանաչելով զնա այր մեծագործ և կատարելագործ ինքեան յանձն եղելոց՝ որոյ և բարեկարգ կառավարութեանցն գտաք հպատակ մինչև ցայսօր. առ որ քանիցս անգամ զթուղթ աղերսանաց գրեցաք ազատել զմեզ 'ի պարտուց հանճարեղ զգօնութբ և կարօղ զօրութբ ոչ և իցէ. սակայն նա բացասութբ էարկ զմեզ 'ի նեղութի տրտմութե. առ որ խնդրեմք այժմ զմիջնորդութի ձեր առ նա. ըստ որում հեռաւորութի իշխանացն Պօլսոյ և այլ տեղեաց ոչ ինչ կարէ օգնել մեզ առ այժմ. թերևս դուք յորդոր լինիցէք նորին Արհազնութե ազատել զմեզ 'ի նեղութէ պարտուց Աթոռոյս.



առխ

Առ իս են և գրուածք ձեր ինձ 'ի Կարնոյ յելին մայիսի․ 'ի 16 յունիսի և 'ի 11 յուլիսի՝ որոց առաջնովքն գրէք առ մեզ առանց իրիք փոփոխութեանց զմինչ, թէ ոչ կամիմ գնալ յՄ․ Աթոռն և ոչ գալ այդր առ Սրբազնագոյն Կաթուղիկոսն, և զիս զինչ կամիք առնել զի եղիցի և ինձ հաճոյական․ Առանձնական նամականս և խորհուրդ տայք ինձ զգուշանալ յԱնօքեանէն՝ որ երկնէ 'ի խորհուրդս իւր գնալ 'ի Պետաբուրկոյ և 'ի Ռուսաստան և անդուստ մարտնչել ընդ իս․ Իսկ երրորդաւն ոչ տեսեալ զՅովս ը̅ գրեցելումն, աղմկեալ հոգւով և լի դառնութ̅ անխնայ դնեալ ամ̅ պարտաւորութեանց՝ որոտաձայնս բարբառելով գրէք․ Եղբայր՝ լուաք 'ի նորին Սրբութենէ հրամայական գիր էք առեալ օրինաւոր կերպիւ․ բարւոք է․ ահա կուտին և բարձրանան ալիք հողմակոծեալ․ լսեմք մահուար մի հատոյն՝ ունին յղեալ 'ի Պոլիս, այժմ և պատրաստեն յատուկ փորձապետս յղել կրկին 'ի Պոլիս․ Հրամայականն դուք ստանալոյն, ձեզ հարկաւոր է ուր հարկն է ձեռն ածել և անօրինել․ գիտեմ կասես ես իսկ եմ․ այո և ես ասեմ արժան իսկ ես․ ապա հրամայականն առնուլ և 'ի յանկողնի թաւալել, յայտ է՝ թէ գիտութ̅ խաւար ածես 'ի մտ̅ լուսաւոր ծննդի քո և 'ի մտ̅ որբացեալ միաբանութեան նորին․ և այլն․

Առ ձեզ են և գրուածք իմ 'ի 10 և 'ի 14 յուլիսի 'ի պատասխանի երկուց առաջին գրութեանցն ձերոց, թէ լուեալ զձայն սգ̅ եղբայրութեան ձեր․ զիս զինչ կամիք առնել, եթէ չէր ինկոյն հետևեալ այնմ թէ փոյ մարդոյն՝ որ տարակուսեալ կայցէ 'ի մտ̅ երկուց ճանապարհաց․ այժ կարօղ գտանէի անդէն առ նմին զերբայրականն իմոց կամաց առաջի առնել անարատ կրկէք ձերում սրբութեան․ իսկ զի երկոքին և խոստելք 'ի ձէնջ՝ գնալն յՄ․ Աթոռն և գալն առ նորին Սեհափառութին, մեք և տկարացեալ այժմ 'ի ճանաչել զհաճոյականն ձեզ․ ը̅ ձեզ համաձայն թողաք շնորհաց Տեառն և ձերոց ընտրութեանց․ Բայց զի սեպհական պարտաւորութ̅ իմ և ձեր յայտնի գտանի կոյացեալ ինքնակէս, պարտաւորիմ զքան Տն յիշեցուցանել ձեզ աստանօր․ նախ՝ թէ Ու կարէք



երկուց

երկուց տերանց ծառայել. զի եթէ զմին ատիցէ և զմիւսն սիրեսցէ. և եթէ յաջ ասացի և ծառայ եղէ երկուց համանգամ եղբայրութե մերում զամս ութն, թէ Աթոռ Սբ Էջմիածնի հաւատարել ունին փափկոց Սբյ Կարապետի որ 'ի Մուշ. այժմ ես գերազանցեալ քան զնոյն տեսանեն աչք բազմաց 'ի նոցունց և լսեն առ հասարակ ականջք հեռաւորաց կամ մերձաւորաց ըստ ամ̄ պարագայից, թէ մեռելոց և կենդանեաց Գերագահ Մայր Աթոռոյ ամ̄ Հայոց՝ իշխեն տիրաբար իշխանք հեթանոսք. որոց ապացոյց ունիք արդէն առընթեր զհրաւիրակն Տէր Նշ̄ս առաքեալ յիշխողաց անտի հեթանոսաց. և աւելի ես քան զնոյնս՝ այդրէն իսկ արժանի գտանիք տեսանել զխան՝ վերակացու կամ լծակից հրաւիրակի ազգաց և ժողովրդոց Հայոց՝ յանուն կամարարաց իշխանութեց բարբարոսաց հարազատից Սբյ Կաթուղիկէ Էջմիածնի և լրութ եկեղեցւոյ Հայաստանեայց՝ յընտրութի նորոգ Կաթուղիկոսի առ կենդանութ̄ Օծելումն՝ մեկուսացելոյ յերեսաց անտանելի չարակրութեց 'ի նոցունց. Գրեալ է. ամ̄ ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք. և վկայեալ է՝ թէ փորձեալն կրկին փորձելն յիմարութի է. առ որովք այլք առ 'ի մէնջ 'ի զուր տարապարտուց վարկուցեալ, համառօտեմ զբանս.

Արդ ուրեմն ցանկամ լսել 'ի սր̄ եղբայրութ ձեր վս̄ իմ գրելոցն նշանակեցելոց մի առ մի՝ ըստ կարգի ժամանակացն ուրաքանչիւրոց. Եւ նախ վս̄ գրելոցն յինէն առ ձեզ յամի 1818, յունվարի 22, թէ զի՞նչ ազդեցին բանքն իմ այնորիկ. Հարցմունք ձեզ վս̄ որում կտակեալ լինելոյն զմասունս հոգւոյ իւրոյ բարեյիշատակ Դաւիթ հօրն. և կամ զի՞արդ զվախճանն ընկալան գրեալքն իմ յետ նր̄ յամսեանն մարտի 24. թէ ունիք երկնել մերձ ընդ մերձ զմեծագոյնս ես 'ի տիրապէս հիւանդութեամբ և սքանչացութեամբ ամենեցուն, քան բազմաց.

Ապա վս̄ գրելոցն 'ի ձէնջ առ իս յամի 1820. յունիսի 19. թէ ճշմարտութբ̄ էին առ իս այն գրութիք ձեր, թէ ստութբ̄. Նոյնպէս և վս̄ գրելոցն ձերոց առ նորին Մեծ. Քահանայապետութին 'ի Պրուսայէ՝ ը̄ երկրորդ աւերիչ 'ի ձէնջ նախագրեալ Ստեփաննոս Տէր Նշ̄ին Նօքեան և միւս Ստե-



փան

փառաւոր Տէր Լէոպոլին ’ի 25 Նոյեմբերի այսր ամի. թէ՝ Հաստա-
տարմութեամբ կեն այդպիսի խորհրդատրութիք ձեր, եթէ
զբօսանք իմն. Կամ թէ՝ յառաջադրելն ձեր նորին Մեծութե
ծանուցել լինէին զայն խորհրդատուութիւն ձեր, զի առ նմա՞ հարա-
զատութեանց ձեր էր, թէ զի առեալ անհարազատութեանց.
Եւ կամ թէ՝ առ ո՞ երկոցունց ’ի մէնջ առանձնագրութիւն ձեր
պարտ էր ընկալնուլ հաւատարիմ. Եւ կա՞մ զի՞նչ հարկ ստիպէր
զձեզ առնել միումն կամ միւսումն՝ երբ մին Հայրապետ էր
քո և Տէր հոգևոր, և մին եղբայր քո և միաբանակից և պաշ-
տօնակից՝ թէպէտև կոծելի ամիմ զի բազմապատիկ յանցա-
նաց իւրոց առ անձն իւր և առ Այ իւր. Իսկ թէ երկոքին
ևս էին հաւատարիմք ոմ և ինն, արդ ահաւասիկ առանց
ձերոց աշխատութեանց՝ Սրբութե նորին մեկուսացեալ իւրովք, և
տուեալ հողոյ զգերանս իւր ընդ Մարգարէին՝ կայ առանձնա-
ցեալ ’ի տարակացութ այսմիկ, և զոպեալ մինչ իսպառ յամ
միաստականութեանց ’ի ձէնջ կանխադատելոց. Երկրորդ աւելին
ևս զատանի այնմիկ յիւրումն բացակայութե. Եւ մեք ևս գոլով
հասու առանձնակինացն ձերոց ’ի ձէնջ, ոչ ինչ ընդդէմ գը-
տանիմք ձեզ. Իսկ զի՞նչ ապա կայցէ ձեզ այլ ևս արդեւք,
զի փոխանակ յանդիման կացուցանելոյ աշխարհի գեղեցիկ
առաքինասիրութե զջատագովութի ձեր կոչմանց ձերոց և Սբյ
Աթոռ ձեր լուսոյ Գրիգորի Լուսաւորչի անդ Հայոց և հաստա-
տանելոյ զպարտոն միաբան գործակցութ, այդպէս յարուցեալ
էք զարձեալ միաբանութ ’ի վն իւրոյ պատկառելի Տէրութե
և ’ի վն իմումս նուաստութե. և անդ զօրութ և կարողութ ձերով
ջանայք զերկոսին զմեզ հրատարակել յառաջ և այժմ մխա-
սապարտս և թշնամիս ձեզ և Սբյ Աթոռոյ մերում։
Յանկամ նոյնպէս լսել և յեղյ արց խորհրդականաց
և յամ միաբանութեց ստորագրողաց զմահուերակն գրութն
առ ամենապատուելի ազգն Հայոց ’ի Կոստանդնուպոլիս. և
զգանգատանաց գրութիւն առ Կուսակալն կողմանցս յամսեանն
յուլիսի կամ օգոստոսի և անմիջաբար զկնի ’ի նոյն օգոստոսի
30. զերկոտասան խնդրագրութիւն առ երկոտասան Նախապա-
տիւս անձինս յայամ քաղաքի վն միջնորդելոյ առ մեզ ’ի սակս
Հաս

հատուցման պարտուցն. ըստ նոյին և 'ի Սրբուէ Ձեր, թէ զի գալուստ զօրաց Ռուսաց յԱթոռն եղեալ է յամի 1803, և աւելի քան զամս տասն յառաջ քան զպարտաւոր լինելն Աթոռոյն՝ առ Լինչ փաղձան օգտակար գրեթէ և ստորագրելի այժմ ըստ կարգի պատճառանացն պարտաւորութեան իւրեանց։ Կամ զի պատճառք պարտուցն՝ յերկոտասան դրութեան իւրեանց ցուցանեն նախ զնորին Արքայնադոյն Տէրութն՝ թէ նա 'ի գալն իւր երբեք զպարտս 'ի Ռուսաստանու, եթէ գիտեն այսպէս ստուգիւ ոչ և գրեանն. ըստ էր ոչ նշանակեն պարզապէս՝ թէ զո՞րքան գումար պարտուց երբեք նա ընդ իւր. կամ 'ի գումարաց ծանրատոկոսի պարտաւորութեանց եղելոց յորէ սկզբնաւորութեան պարտուցն՝ յորոց ընկալեալ գումարքն իցեն հատուցեալ մի՞ 'ի նորին Սրբուէ ընդ իւր բերեալ պարտուցն։ Կամ զի պատճառք աղքատանալոյ Աթոռոյն և բազմանալոյ պարտուցն զնորին Սրբութեն ցուցանեն և զանձնս վերանորոգութիս. մի՞ այն ամ՟ պատճառանացն որոշեալք կարգաւորելոց յիմում բողոքագրի առ ժառանգն Տէրուն Պաւլեց՝ զեարդ կամին վկայել. սուտ են այնոքիկ առ հասարակ, թէ գոյ ճշմարտութի 'ի նոսին. և թէ գուցէ՝ ըստ էր թաքուցանեն մինչ խափառ զճշմարտութիւն այնոցիկ։ Նա կամ՝ զո՞րդ անզգոյշ լինիլն գրել, թէ Ներսէս Վարդապետ 'ի Ղարաբաղ ընկալաւ զգիր, զի բաց յանուանէ Կաթողիկոսուն այլ ամ՟ գործադրութիք և կառավարութիք եղեալն կախեալք 'ի կամաց իւրոց. և թէ պատճառ ոչ հատուցմանն պարտուց կամ ոչ վերադառնալոյ Կաթողիկոսին և ոչ կամեցող բարեաց Աթոռոյն՝ է Ներսէս Առաջնորդն։ Ոչ ապաքէն աշակերտք են աւետարանութեան Տ՟ն ամենեքին՝ և պարտական են առ հասարակ հնազանդիլ հրամանացն, թէ ծանիջիք զճշմարտութիւն և ճշմարտութիւն ազատեսցէ զձեզ։ Ասասցեն ուրեմն ինքեանք իսկ. ի՞ւ իւիք ըստ կարգի ամ՟ միաբանական իրաւանց աթոռայնոց նուաստ քան զինքեանս կարողանան ապացուցանել զիս, զի այնպէս անդր քան զպայման միաբանական իրաւանց իւրեանց չարախօսել զինէն ոչ խղճահարին։ Նա թէ գիտեն զի հաւաքեաց Ներսէս Առաջնորդ զամենայն արդիւնսն Աթոռոյն՝ և նուէրն իրաւամբ



իւր

իւրեանց գրեն այնպէս, գլխեն և՛ թէ առաւել քան որքան
հաւաքեաց, հատոյց պարտատեարց վեցից կամ եօթանց՝ որոց
մուրհակքն աղաւաղեալք՝ գտանին առ իս աւանիկ աւելի քան
եօթն հազար հինգ հարիւր թումանի. իսկ ընդէ՞ր և զնոյն ոչ
ախորժեն գրել, համանգամայն և խոստովան լինել թէ աւե-
լի ես քան զնոյն՝ ստանձնեալ կամաւ իւրով զհատուցումն
ամ պարտուց Աթոռոյն, առաքեաց առ այն և առ Արքայոր-
դին Պարսից զՄարտիրոս Արք Եպս Սիւնեաց յատուկ խընդ-
րագրով իւրով. Եւ այն զի գրեն թէ խնդրեցին քանի ամիս
ժամանակ, ո՞վ խնդրեաց, ո՞ւմ խնդրեաց, թո՛ղ հրատարակես-
ցեն զայն գրովի. այն զի և ես զամ զգրութիս վերաբերեալս
առ դարձումն Առաջնորդոյն Եթեղկոսին յԱթոռն, և կամ
առ փոյթն իմ յաղագս ազատութեց Աթոռոյն և Աթոռնոց
յամ տարապարտ նեղութեանց և ՚ի զրկանաց և ՚ի ծանրութեց
պարտուց՝ կանխաւ յառաջ ոչ անդէպ համարեցայ հրատա-
րակել տպագրութբ. ուր և տեսանէքդ աչօ զանետրակն առա-
քեալ ձեզ ընդ այսմ.

Առաւել ես ցանկամ լսել յատկապէս ՚ի ձէնջ՝ թէ
երբ ՚ի մտանելն ձեր ՚ի Կարին հանդարտ էր հոգի ձեր ՚ի մա-
սին իմ, և չգոյր ինչ տարաձայնութի անդէն յամ հասարակութե
քաղաքին որպէս և յայտ առնեն ՚ի 16 յունիսի և ՚ի 11 յու-
լիսի գրութիքն ձեր. ո՞վ խռովեաց զխաղաղութի հոգւոյ ձերոյ
այնպէս, զի ընդոստուցեալ իսկոյն՝ վճռադատէք այնպէս, թէ
յայտ է զի գիտութբ խաւար ածեալ ՚ի մտ լուսածին ծնողէն քո
և ՚ի մտ որբացեալ միաբանութեն նորին. և այլն: Ո՞վ ասաց
քեզ՝ թէ ես իցեմ առեալ ՚ի նորին Առաջնորդէ զգիր հրա-
ժարական. Ո՞վ հաւատարմացոյց ձեզ այնպէս, թէ ես իցեմ
եղեալ արգել և խափան մեծի տենչանաց Առաջնորդոյն Տն
մերում յաղագս վերադարձի նր յԱթոռն. և ո՞ր արժանաւոր
հոգի վկայեաց ձեզ, թէ նորին Մեծութին թախանձանօք և
արտասուօք անգամ խնդրէ ՚ի մէնջ թոյլ տալ լինելոյ գնալ
՚ի սբ Գահն. և մեք բռնացեալ այնպէս ընդդէմ կամաց Սրբութե
նր՝ աննուաճելի իմն ինքնիշխանութբ մերով, համարձակիմք
ասել Օծելոյն Նն և ամենապատիւ Տն մերում՝ թէ չունիս


դու

զոր տեսանել միւսանգամ զնոյն տեղի. այլ այդրէն հեծե-լոց են ոսկերք քո։ Գիտէք թէ խնայումն իմն չէր ինչ ձեզ փոյթ. իսկ ընդէ՞ր և ձերում անձին եղէք անխնայ, զի զանցեալ հանճարեղայն զօրինօք՝ այնչափ դիւրահաւան գտայք ոգւոյն չարուն՝ մինչև յետ դնելոյն ձեր առ ի զայնպիսին, տեղի տայք և 'ի բազմութեան ժողովրդեանն տարածանել զինչն զայն շշունչ։ Ո՛չ ապաքէն քարոզ գոյր Առաքելական. Սիրելիք մի ամ՟ հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք զհոգիսն եթէ յԱՅ իցեն։ Եւ կանխաձայնեալ էր յիմաստնոյն. Որ փութա-կոտ է 'ի հաւատալ՝ թեթևամիտ է և փոքրկացի։ Ո՞ր թէ անծանօթ էիր դու բարուց բանաքերին քեզ բարեփոյթ հրաւիրակի քում բազմափորձ Յովհաննէս Եպսի քուրա առ-աստայելոյ։ Ո՞ր թէ անճաշա՞կ էիր բնաձիր կրից կամ ներ-գործուեց նոցին, զի բանք նր ըստ այնմ օրինակի մարթացան զերել զմիտս ձեր և ձգել զհետ կամաց նր այնքան ապշութ՟ մինչև ոչ ևս զօրել զարժանաւորն բանաւորութ՟ և գերապանծ իմաստութեան ձեր 'ի գործ դնել՝ թէ արդեօք գուցէ կարելի 'ի ներքոյ Կայսերական ահեղ հովանաւորութ՟, յերկրի՝ հարս-տացելոյ բարեկարգութ՟, արդարադատութ՟ և ապահովութ՟, 'ի մէջ խուռն բազմութեան ազգաց և ազանց, յանդիման ժողո-վրդեան եկեղեցւոյ Հայաստանեայց և հօտի Մր Լուսաւոր-չին ամենաբարեպաշտ ազգի Հայոց՝ որոց թիւք զանցանեն աւելի քան երկու հարիւր հազար անձանց՝ 'ի նեղ ընկճանել այնքան Տրք Եպսի միոյ՝ զընդհանրական Կաթողիկոսն ամ՟ Հայոց զգերազանցեալն յիւրումն կարգուն բն առանձնական շնորհաց պարգևեցելոյ նմա յԱՅ և 'ի Տէրունեց և յիշխանութեց աշխարհակալաց։

Արդ զի քաղցրացան ձեզ մինչ իսպառ բանք նորին կակուղ քան զձէթ և աղեցին 'ի ձեզ այնքան, մինչև որսա-ցեալ ձեր բոլորապէս 'ի նորա կամս՝ կամ 'ի կամս հրաւիրո-ղացն զձեզ նմա, ընկեցիկ եղեն 'ի ձէնջ կամք իւրոյ Սըր-բազնագոյն Օծութեանն, և հրաւիրանք նր զձեզ առ ինքն գրաւոր օրհնաբանութ՟ իւրով։ Ընկեցիկ եղեն և կամք ձեր նախընտիրք ձեզ՝ թէ ոչ կամիմ գնալ յԱթոռն և ոչ գալ



այդր

այդր, է նոյն և հետևեալն կամք ձեր երրորդ՝ բևեռեալ ՚ի միտս ձեր վերադառնալ անտի ՚ի Կարնոյ ուր հարազատ եղբայրութեանդ էր հանդէսն։ Իսկ և ընկեցիկ գոլն անդստին մերոյ կամաց և բանից և ջանից վաղուցեան գոլով մեզ քաջածանօթ, այնէ զի ՚ի պատասխանի ձերոյ հարցմանց՝ թէ զիս զի՞նչ կամիք առնել, մեք միայն յիշեցուցանելով ձեզ զՏէրունականն. Ո՛չ կարէք երկուց տերանց ծառայել. և զառաքելականն՝ թէ զամ̃ ինչ փորձեցէ՛ք, զբարին ընկալարուք. և զառածըն՝ թէ փորձեալն կրկին փորձելն յիմարութի̃ է. անդէն առնոյն մեզէն իսկ անպատրուակ հրապարակաւ վկայեցաք՝ թէ առ որովք այլք առ ՚ի մէնջ ՚ի զուր տարապարտուց վարկուցեալ, համառօտեմ զբանս։

Իսկ ապա՝ դուք ինձ որոշեցէ՛ք զճշմարիտն այժմեան գրութեանց ձերոց առ իս, թէ վասն առանձնական օգտի սեպհական անձին ձերոյ գրէք, ո՛չ և նշանակէք ՚ի գլուխ բանիցն՝ թէ մտածելով զերևելի և զաներևոյթ օգուտն և զվնասն տարապարտիս՝ եկի յԱ.թոռն, գտի զշնորհս նորին Բարձրագահութե̃ն. անկայ ՚ի ծունկս նորին վասն ոչ յղելոյ զմահուէրն և զմահուէրատարն ՚ի մեծն Պօլիս. և այլն։
Եթէ վս̃ օգտի Ա.թոռոյն և հասարակաց միաբանութե̃, ո՛չ և գրէք՝ թէ նորին ոչ վստահացեալ, զիս զհամոյս ձեր բարեխօս առ ձեզ կալնուլ մարթացայ վասն հաստատելոյ ըղպարտսն պարտատեարց։ Եւ թէ վս̃ օգտի իմ կամ իւրոյ Մեհափառութե̃ն, որպէս և յուսացուցանեն գրեալքն։ Եթէ ողորմութե̃ն Տ̃յ մաղթանք մեր լինիցին ընդունելի ձեզ, այն է որ հրամանաւ իշխողին անտարակոյս զամ ՚ի տևութի̃ և ՚ի շնորհակալութի̃. և յայնժամ լինին բազում յառաջածուիք և բարի բանք Ա.Վ.
Այլ զի ակնածք իմ մերձաւոր են բերանոյ իմոյ առաւել քան ձերում սր̃ Եղբայրութե̃, առ այն ուրեմն զի մի զյիմարութիւն իմ խայտառակեցից ինձէն, աղաչեմ առանց անգոսնելոյ զբանս իմ՝ լսել մարդասիրաբար։ Եթէ զալըստեանն ձեր ՚ի տևութի̃ մեր կամ Աբրաղնադոյն Տ̃ն մերում լինելոց էին բազում յառաջածուիք և բարի բանք՝ կամ վասն



ձեր

ձեր. կամ վասն Աթոռոյն և միաբանութեն. կամ Տն̃ մերում և կամ վն̃ մեր, իսկ ընդէ՞ր տայս առանց երկք ծանրակրութեանց և առանց ինչ տուժմանց ձերոց ոչ յօժարեցայք ձերով ազատիշխան կամօք գալ առ մեզ և յառաջածութ բարեացն այնոցիկ վերադառնալ անդրէն յԱթոռն. քան թէ գնացեալ այդր՝ այժմ փութայք սակ արկանել ընդ իս, զի թէ հատու-ցից զբազմութին պարտուց՝ եկեսջիք 'ի ցանկալի տեսութ մեր հրամանաւ նորին Բարձրագահութեն, իսկ թէ ոչ՝ գտայց ես զրկեալ այսմիս 'ի ձերոց փափագելի տեսութեանց:

Հզօրանամ յիս կարծիք, թէ բարիք իմ ոչ վն̃ Աթո̃յ ամ̃ Հայոց և ոչ վն̃ անձանց ձերոց կա̃մ եղբարց միաբանութե, և ոչ վն̃ Արքայնագոյն Տն̃ չեն ինչ ձեզ պիտոյ. այլ միայն զի պաշտպանեսջիք լաւդ՝ ջատագովք բարեաց Աթոռոյն և բազմա-վիշտ Էջմիածնի, և գայթակղութ նոցին առ իս՝ պարապեսջիք յաջողածեռն աննահանջելի յառաջադիմութ 'ի բարութեան Աթոռոյն՝ ծառայիք այնմիկ:

Բայց եթէ գոյր ձեզ պիտանաւորութի, հարկ էր զօրէն նեղելոց 'ի ցաւոց՝ նախ զպատճառսն յայտնել ուղղութ և բանալ և դնել յառաջոյ տեսութե աչաց ամենեցուն զվէրսն զայրացեալ, և այնպէս ապա խնդրել զկարեկցութի գործա-դրութ կարևորացն՝ դեղոց և ճարտարութեանց. այլ ո՞չ տե-սանի 'ի գրութե ձեր յայսմիկ և յամ̃ գրութս եղբարց խորհրդ-դականաց կամ միաբանից՝ նշանակեցելոյ 'ի վերոյ, սեռն դաշնակցութեանք միաբանեալ էք առ հասարակ խաւարա-անդնդոց ծածկել և թագուցանել 'ի տեսութեանց բնաւից զպատճառսն վիրաց և ցաւոց. և յարուցեալ 'ի վր̃ իմ և 'ի վերայ անձանց ձերոց անդթութ բազմա, թշնամի ձեր և կո-ղոպտիչ Աթոռոյն զիս և զզօրս Ռուսաց ցուցանէք. չարաչար առեցող բարեաց Սբ̃յ Մօրն իմ Լուսոյ՝ և ասախ ոխերիմ Օծութեան և կենաց Ա̃ծառեալ Հայրապետին իմոյ՝ անար-ժան բանաւոր դատողութեց՝ զանձն իմ ենթադրէք, ոչ ինչ բնաւ զգացեալ՝ թէ նորիմէք և զհասարակախնամ Տէրութին քամահէք, ը̃ որում ոչ որ բռնակալ զօրաւոր այնպէս:

Նաև ես այժմ թողեալ զայսցանէ, յիշեցուցանեմ



միայն

միայն ձերում սբ Եղբայրութն. զի զոր արդ դուք աղաղակէք առ արտաքինսն՝ տրտնջելով զմէնջ, ես յօրէ մտիցն իմ այսր՝ անդուլ ձայնարկութբ աղաղակելով առ ձեզ, ոչ դադարեցայ աղաչել զձեզ զամենայն խնամ ունել կուսանաց ձերոց և Աթո֊ռոյն. և ոչ լինել անհոգ վս բարւոք կառավարութեց.

Մինչ էիք դուք գործովք նուիրակութ ՚ի կողմանս Պարսաստու՝ խնդրեցի ձեզ ՚ի վերադառնալն ձեր գալ առ իս՝ խոստանալով ձեզ նաև զծախսն ճանապարհորդութեան ձերոյ՝ զմտաւ ածելով թէ զորս ոչ կարողանամ գրով, դուցէ կարողացայց հաւանեցուցանել բանիւ բերանոյ իմոյ. Այլ զի ես լինքն իսկ՝ էի անհաւան ՚ի ձէնջ մինչև յայժ, զանց արար֊եալ զլինել յաւելեր քեզ պարծանս անդէն յԱթոռն, թէ նա գրէր առ ՚ի խաբել զիս, և ես գրէի առ ՚ի խաբել զնա. և վեր֊ջապէս մեք խաբեցաք զնա և անցեալ եկաք այսր. Այժմ ես թէպէտ ՚ի մասին մեր զգուշացաք մեք չտալ միասանգամ պատճառս խաբէութեան կարծեաց զմէնջ, այլ դուք նոյնպ. վարեցեալ ընդ մեզ՝ հրապուրեալ ՚ի բարի խորհրդականաց, վասն ձեր անօգուտ համարեցայք լսել ինչ առ ՚ի մէնջ ա֊ռանց գնոյ, և վս մեր յայժ օգտակար համարէք լսել ՚ի ձէնջ թանկագնոյ՝ հատուցմամբ մեծագումար պարտուորութեցն.

Այլ զի մի անիրաւ իմն դատապարտեցից բանք իմ այսուքիկ, ցձեզ հարցանեմ. երբ դու և Սնօքեանն կանխաւ յառաջ ՚ի միասին էիք ստորագրօղք խորհրդական գրութե առ յուսացեալն ՚ի խորհուրդս և ՚ի բանս և ՚ի գործս ձեր հեղահամբոյր Տրն մեր մեծ Քահանայապետին ամ Հայոց՝ վասն գնալոյ ձեր ՚ի Բեսարաբիայ և վս վերադառնալոյ զխաղա֊ղունի երկուց Սրգն Տ՛ք Եպսկպսն վիճակաւորաց, զի՞նչ էր այժմ նոր ես ՚ի Կարնոյ գրելդ առ իս. Ծանիցուք և զայս խորհրդաբար՝ զի թէպէտ յառաջմէ ես գրեալ եմք, բայց արդ ես գրեցից. զի կամին Սրգն Ծատուր Երհւոյ և Սնօքեանն գործոցն վերանորոգութ առնել. այլ ոչ է օգուտ սբյ Աթոռյն. և ծառուն խորհրդոց Սնօքեանին որպէս հայելի առաջի աչաց մերոց յայտնի է. զի զկնի առնելոյ այս և այն, կամի դնել ՚ի Բեսարաբիայ և յԱժդարխան առ Պետան նոցին՝ որոց շնոր֊



հիւն

հիւ՛ն մաքառիլ ընդ ձեզ. և այլն, և չմոռանել խնկ 'ի ս՛ր Աթոռն. և մեք ոչ եմք նախանձու, այլ փառս օգտի ս՛րբ Աթոռոյն գրեմք:

Սուրբ եղբայր՝ տուր ինձ առ սոյն զս՛ր պատասխանի, թէ զիարդ արժան իցէ ինձ զայն խորհուրդ ձեր կշռադատել փառս իմ կամ վ՛ս Աթոռյն. խորհուրդ և յառաջադրութի ս՛ր եղբայրութե՝ օգտակար վ՛ս Աթոռոյն և վ՛ս իմ, թէ մերկեալ ամենևին 'ի սրբութենէ մեց, վնասակար անմիտ. Գիտեմք թէ ծը-ռուի խորհրդոց Անօրենանին յայտնի էր առաջի աչաց ձերոց յորժամ ընդ ձեզ 'ի միասին ստորագրէր զայն գիր ձեր խոր-հրդակցան: Իսկ ծառուի խորհրդոց երկուց միջեալ միաձայնից Տէր Աստ՛ոյն կամ պակասութե շնորհաց նոցին առ իս ուստի եղև ձեզ յայտնի, զի կարող եղէք ս՛ր հաւաստի նշանակել և զնոցանէ՝ թէ լինելոց են նոքա ջատագովք ծառուն խորհրդոց Անօրենանին ընդ իս, և գործակիցք նմա 'ի զօրացուցանել զմա-քառումն ն՛ր ընդ մեզ:

Արդ ուրեմն ըստ գրեցելումն 'ի սրբութէ ձեր առ իս՝ թէ լեր իրաւախոհ, և ես զնոյն 'ի ձէնջ խնդրեմ. լեր իրաւա-խոհ առ սոյն և առ այլս սոյնպիսիս:

Յառաջագոյն հաշտակա և աղաղակաւ խոստանալով զհարազատութիւն վ՛ս Աթոռոյն և վ՛ս Սրբազնագոյն Կաթողիկոսին, զիմէիք տարածել 'ի Կոստանդնուպօլիս լինել ջանադիր 'ի գտանել զօգնականութի պարտուցն հատուցման. այլ ներքին կամօք զանխուլ խորհուրդ 'ի սրտի ունէիք ընկենուլ յԱթոռոյ զՕծեալն Տ՛ն: Այժմ ես զի նոյնպիսի աղաղակաւ յօգնա-կանութիւն ձեզ կոչելով զքաղդուամս՝ գրէք առ իս թէ հատ զպարտս Աթոռոյն և վերադարձի յԱթոռն զՍրբազնագոյն Կաթողիկոսն. ներքին կամք ձեր առ իս կամ առ նորին Սրբութին արդեօք զի՞նչ իցեն:

Սուրբ եղբայրդ իմ 'ի դուռն ձեր կարդեալ 'ի մէջս աշխարհախումբ բազմութե ազգի Հայոց յաւակամս առ 'ի հա-տուցանել զպարտս, չյօժարեցար զանձն քո պարտաւորել ումեք վ՛ս թեթևացուցանելոյ ծանրութե պարտուց. և յամ ծուլութեանց գլխաւորագոյն միաձայնն նուիրակեցելոյ 'ի ձէնջ



հա

հատուցել միայն քանն և մեզ հազար մէկ հարիւր ղուռուշ
ոչ անարժան համարեցիր գրել․ մի՛ ևս յղեսջիք յանուն իմ զգիր
հատուցման դրամոց ամէք․ զի հայրն ուրեմն բաւականանան
ծախուց իմոց․ և թէ համարեսջիք զիս ոչ մեռեալ և սիրաշահ
օգտուէ թողջիք 'ի կամս իմ․ ես և մի՛ համարիք զիս միայքան,
այլ սատար ոք օգտակար Աթոռոյն․ իսկ զնմանէ այժմ այդպէս
ջերմեռանդագոյն բերմամբ առ Աթոռն և Աթոռայինսն,
հրաւիրեսջիք զիս 'ի փոքր մեծանկի իմում յայսմիկ առաստանալ 'ի
հատուցանել զպարտս կամ մեծահոգին արդեամբք և կամ
ընկալնլով զպարտս յայլոց․ Ածայրն և պաշտօնեայն է մեծին․
որով չափով չափիք, չափեսցի ձեզ․ Եւ որոյ և ձեզ արժան է
ունել յամ բանս և 'ի գործս ձեր զչափ արժանաւոր՝ զի կա-
րող լիցիք տալ զհամար քանքարացն պարգևելոց ձեզ 'ի շնոր-
հաշարդողէն զձեզ Եմմանուէլէ և Աըբ Յիսուսէ։

Վկայէք ինձ ինքնին իսկ՝ թէ քանի՛ քանիցս խնդրեցի ես ձեզ յամի 1813 'ի բաց կալ 'ի ցանկութեանց անտի գնալոյ 'ի Կոստանդնուպօլիս․ այլ զի ոչ գտին զտեղի 'ի միտս և 'ի կամս ձեր խնդիրք իմ յայնժամ, զի՞նչ դուք շահեցայք ձեզ գնալովն ձեր անդ բաց կամաց սրտից ձերոց։

Ոչ ախորժէք լսել ինձ՝ և ես չունիմ զիրաւունս պարտաւորելոյ զձեզ առ այն․ այլ զի առաքելական դահակալութ մերապատուեալ էք 'ի գլուխս պարու ժողովրդեան հաւատացելոց, լուարուք Առաքելական քարոզութեանցն․ Իմաստութ գնասջիք առ արտաքինսն։

Չե՞ք դուք նախապատրաստեալ 'ի լինել առաձայնք առ անդրահնչելոյ զձայնս 'ի խորախորհուս հայնարկութեանց․ չէ՞ք դուք պարկափող կամ պարկապկու՝ զի ներդնեալ յանուն թօ՛ յայտնեսջիք զանձինս գործարան խաղարկութեանն ձերոյ՝ հնչեցեալ 'ի հրապարակս զչունչ օտարաց։ Լաւ ես համարեցի վասն ձեր ոչ կորուսանել զշնորհ բանաւոր ընտրութեանց Եւ արժանի կոչմանց ձերոց։ Ո՞չ ոք որ բարեկամ ումեք առաւել քան զինքն․ և հակադարձեալ Ո՞չ ոք որ թշնամի ինքեան առաւել քան զինքն․ առ որ և մեծեր իմաստնոց համաձայնիք են առամենեսեան․ Ոչ ոք փախչի, եթէ ոչ հալածէ․ Դուք ուրեմն



զգու

զգուշացէք ձեզ նախ ՚ի ձերոց վնասուց. և վկայեսցեն ինձ իս-
կոյն հոգիք ձեր ամենեցուն՝ թէ չեմ ես ձեզ թշնամի և ոչ
գժկամակ և ատեցող բարեաց Աթոռոյն և Աթոռակալին նորին՝
որոց միշտ ճանաչեմ զանձն իմ պարտաւոր ամէն. և ակնկալ-
եմ՝ թէ և նոքին ճանաչեն նոյնպէս զճշմարտութի բանից և խոր-
հրդոց իմոց։ Ընթեռնումք զգրեալն. Արդ ոչ ինչ օգտեցան
որք այնպիսին գնացին. և քաջափորձ էք՝ թէ չէք օգտեալ ցայս
վայր յանընտիր խորհրդոց կամ բանից և գործոց նախանձելոց.
Ի փորձոյ անցելոյն արժան է առնուլ զգուշ և հաւատալ
բանիցս ճշմարտութե. զի հետևեալն այսուհետև ոչ միայն լի-
նիցի ձեզ և սրբ Մայր Աթոռոյ մերոյ անօգուտ, այլ չարա-
գոյն յոյժ յոյժ. զի ամ ազգէ մերոյ թափանցեալ եղեն մինչև
ցուկերան ցայս վայր ժամանակի ցաւք սրտի ընկալեալ առ ՚ի-
մէնջ։ Ո՛չ գրեմ ես զայսոսիկ յաղագս օտար կարծեաց ՚ի մա-
սին Աթեղկութեան, այլ միայն վն գործոց գործեցելոց մինչև
ցայսօր՝ յորս ոչ ինչ գովանի և զուարթարար նշմարի նորէք
՚ի ներքս Աթոռն կամ արտաքոյ. շատ է մեզ չափ անսար-
գութեանց հոգւոյ մերոյ, և շատ է հասարակութե ազգի մե-
րում երկայնմտութե նդ առ մեզ այսչափ։

Իսկ ապա խնայեցէք սրբ Մայր Աթոռոյ մերում և մի՛
լինիք կամարարք անձանց ձերոց կամ այլոց. այլ խոկացէք
բարեպաշտ կամօք և ուղղեցէք իմաստութ զհանճար՝ յարժամ
և օգնականութի երկնից ոչ երկբայիմք թէ օժանդակեսցէ ամ
բանից և գործոց մեր ամենեցուն։ Ամէ և երկնային է պատ-
գամն. Դարձարուք առ իս, և ես դառնամ առ ձեզ։

Ունիմ ես բնաւ զծածուկ իմն յիս վն անձին իմոյ.
այլ ոչ գիտէ ծածկագէտն՝ վն բարեաց Աթոռոյն և հասա-
րակութեան եղբարց միաբանութե և ամ ժողովրդեան ազգի
Հայոց՝ միայն գտանիմ շատախօս այսչափ առ ձեզ ՚ի բզմ
ամաց հետէ. Եւ ՚ի վե այսր ամի թէ շնորհն Այ յաջողեսցէ
մեզ զգալ իւրաքանչիւրոց զարժանաւորն իւրոց պարտաւո-
րութեանց՝ և գումարիլ անդրէն ՚ի մի միաբանութի բանից և
խորհրդոց և գործոց, վկայ զԱծ կացուցանեմ անձին իմոյ՝ զի
աննախանձաբար ամենեքին արհամընծայ եղբայր եմ ձեր և



ամենե

ամենեցուն ոչ՛ յերեկն և յեռանդն. և յառաջընթաց յամ ձեռնարկս վս բարեաց. Աթոռոյ մերոյ և Եկեղեցւոյ և ամ եղբարց միաբանութեն. Այլ թէ գտցի վերապատուեալ մինչ քաղաքս տարաձայնութիւն 'ի սիրտս և 'ի կամս իւրաքանչիւրոց, յայնմհետէ անակնկալ շնորհն Ամենաբաւականին միայն մնայ մեզ յոյս փրկութեան յամ նեղութեանց մերոց կամ մահն հասարակաց:

Գրեալ եմ ես բազմիցս՝ և 'ի վերջոյ ես յամի 1821, յուլիսի 9. առ սրբ ժողովն՝ թէ յամ ժամանակս այդպիսի կառավարութեն Աթոռյն և սրբ ժողովոյ ձեր՝ զումարք պարտուց են սեպհական գանձք. ապա եթէ կառավարութիւն Աթոռոյն սեպհականեսցէ երբեմն ինքեան զնորն արժանաւորութի, և առանց իմ իսկ դիւրահնար է ազատ լինելն սրբ յամ պարտաւորութեց իւրոց. Գրեալ եմ ընդ այսմ նաև յիմում մասին՝ թէ ցուցէք ինձ միայն զպատկեր կառավարութեանց Աթոռոյ Էջմիածնի, և այնուհետ ապա հրամայեցէք ինձ բառնալ զամ զծանրութի և զտօմ՝ վս վայելչական կառավարութեց Աթոռոյն և ձեր. Ցուցէք ինձ զպատկեր ձերոց օգտակար կառավարութեց, և հրաժարեցէք զես զանձն իմ իսկ դնել 'ի վր ձեր. Նոյն և այժմ գրեմ առ սրբ Եղբայրութի ձեր. և կամենամ ձեզ 'ի վր ամ անցելոց յիշատակելոց սրբ Եղբայրութե ձեր ամենախիղճ 'ի սրտէ.

Գնհրապարտեալ ձեր

Խոնարհ ծառայ Ս. Էջ. Աթոռոյ
Աշտարակեցի Ներսէս.

1824. սեպտեմբերի 13.
'ի Տփխիզ.

Պատասխանագրութիւն Ներսէսի Արք. Եպսի
առ Յօհաննէս Արք. Եպսն Կարբեցի.

Արժանաւոր եղբօր իմում Տ՟ն Յօհաննու Աթոռոյն Արք Եպսի և Ազգ. Լուսարարի 'ի Տէր խնդալ.

'Ի 21. ամսոյս ընկալայ յարգմամբ զգրեալդ 'ի 6. սորին և ուրախ եմ 'ի վե՛ր սիրելի առողջութեան ձեր տեղեկութեան.

Լուծից իմոց տարակուսութեանց 'ի մասին կտակի Պաւլէթ Հօրն վե՛ր հոգւոյ իւրոյ ոչ ինչ գտի բնաւ այսու այժմ. այլ ոչ մնամ առանց յուսոյ ստանալոյ զնի.

Զաւանդսն ընկալեալ յառաջագոյն առանց գրոյ մնայի 'ի տարակուսի վե՛ր աւանդողին, այլ այժմ 'ի Շատին-եանց պարոն Աւետիքի բերեալ գրութեան ծանեաք առաքեալ զայնս նուիրանք սիրոյ իւրոյ՝ բարեկամութե՛ք վերահասուցեալ հարազատի Սրբոյն Պօղոս Պատրիարքին Պօլսոյ սիրելի Կա-րապետ Արք Եպսի. և շնորհակալ եմ յոյժ աշխատակրութեանց ձերոց առ հասուցանելոյ զայնս մեզ.

'Ի վե՛ր անցելոյն զորոյ գրէք թէ գտանիք հիացեալ և ապշեալ, ես ոչ բնաւ հիանամ և ոչ զարմանամ. զի հիանալի և զարմանալի են իբր կամ խրախուսիք փնակնիկալք և կամ գէթ անծանօթք զգայութեանց. Իսկ ընդէ՞ր ուրեմն գուցէ հիանալի և զարմանալի թէ զայլոցն եկեսցէ, ապառնին ներկայասցի և լինե-լոյն եղիցի. այլ զինչ ապա թէ կանխաձայնեալքն յԱԾ և յԱծայնոց կատարեսցին. կամ մանաւանդ յորժամ լոյս բա-նականութեան լինիցին իսկ գոյով անդստին նախանկատ՝ վերա-տին անիցի հիանալ և ապշել 'ի հասանել ժամանակի վերա-ժամանելոյ նկատելեացն.

Իսկ առ այն՝ թէ դուք և զայլսն կարէք մակաբերել զմե՛ 'ի փորձ առեալ գոլով, ստուգութ՟ ասեմ զի ոչ ինչ ըն-նու կարեմ մակաբերել աւելի քան զաւետարանինն. միայն յիմում տգիտութեան խորհիսխելով՝ ոչ տգիտանամ ասել՝ թէ այդ մեր սիրելին է երկանց՝ և մեծագոյնս քան զգոյնս ոչ



եւկ

ներկայիմ թէ երկնուջեք մերձ ընդ մերձ 'ի տիրապէս հիա-ցումն և սքանչացումն ամենեցուն՝ քան բազմաց.

Գերապատուութեան ձեր

Խոնարհ ծառայ Մեծի Ազգի Հայոց.
Արքեպիսկոպոս Ներսէս.

1818. մարտի 24.
'ի Թփլիզ.

---

Թուղթ Ներսէսի Արքեպիսկոպոսի առ Բարձր Գեներալն Կուսակալն Աստրախանայ.

Ձեր Բարձր Գերազանցութիւն

Ողորմած Տէր

Միքայէլ Պետրովիչ.

Բարձրագահ գերատեղեան Բէկլարբէկի Փաթալի խան եկեալ առ իս յայտնեաց ինձ՝ թէ ունի ինքն զպարտաւորութիւն լսելոյ յինէն զկատարեալն վն̃ թողլոյ զՊատրիարգական Աթոռն ամ̃ Հայոց և հեռանալոյն աստ 'ի սահման Տէրուն Ռուսաց և հրաժարելոյն 'ի Պատրիարգական պարտաւորութեանց Տեառն Եփրեմայ, և վն̃ փախչմնական հնարից թէ զի՞նչ առնել արժան իցէ՝ զի կարելի լիցի վերադառնալ նմա յաթոռ իւր Էջմիածնի և վարել դարձեալ զպաշտօն Պատրիարգութեն իւրոյ.

Ես նախ ցուցանելով նորին Բարձրագահութեն զօրինակ հրով

հրովարտակաց նորին մեծութեան Փաթալի Շահին առ սրբին իւր և ժառանգն վն առաւելացուցանելոյ զխնամակալութիւն իւր յաղագս ապահովացուցանելոյ զպատրիարգութին Աթոռն և զՊատրիարգն և զամ. զհոգևորականս նորին, 'ի նեղութեանց վերաժամանելոց նոցին, ևս և զօրինակս հրովարտակաց ոմանց իւրոյ Արքայական Բարձրութեան ժառանգի Տէրութեան Պարսից վն կանխաւ յառաջ մշտնջենաւորեալ գոլոյն նր 'ի նոյնպիսի կամս յատկացեալ խնամակալութեանց իւրոց, յայտնեցի ապա նորին Բարձրագահութեանն՝ թէ վն ծանուցանելոյ 'ի վր Աթոռոյ Էջմիածնի և ամ. հոգևորականաց նր 'ի ներքոյ այնքան բարերար հովանաւորութեանց տէրութեանն այն ամ. բռնաւորութեանց իշխողաց Երևանայ զօրաց յամին անցելոյ յայտնեալ եմ իւրոյ Արքայական Բարձրութեան ժառանգի Տէրութեան Պարսից Աբբաս միրզայ Շահզատային, ևս և ձերում Բարձր Գերապանծութեան ամենախոնարհաբար խնդրագրով խոնարհ համար 130. 'ի 13. ամսեանն սեպտեմբերի, և վն դիզանալոյ մեծագումար ծանրատոկոսի պարտուց 'ի պատճառս բռնաւորութեանցն և յափշտակութեանցն նշանակելոց, իբրև այնպիսի զարհուրելի սպառնալիք ևս լուեալ է 'ի Սարդարէն՝ թէ ընթեր ամենափառաւոր Կավալերի հարող և հզօր Ամենողորմած Կայսերութեան Ռուսաց ունի խնդրել զնոյն, հնարեալ է հեռանալ 'ի Պատրիարգական Աթոռոյն՝ զի թերևս կարողասցի գտանել զհնար ապահովացուցանելոյ զանձն իւր և զԱթոռն յանտանելի բռնաւորութեանց անտի և պարտուց, այլ վն տկարանալոյ առ այնս յաղագս բազմադիմի պատահմանց անձնականաց և արտաքնոց 'ի հասակի ծերութեան իւրոյ, պարտաւորեցաւ հրաժարեցուցանել զանձն և մնալ աստէն. իսկ վախճանական միջոց վերադարձի նր անդրէն յԱթոռ Պատրիարգութեան ամ. Հայոց, ըստ որում նա գտանի Պատրիարգացեալ ըստ կանոնաց Հայոց օծութ. և ոչ սոսկ կոչմամբ, և չունի զերաւունս առանձնականս, և ոչ բնաւ զկանոնս ազգայինս վն հրաժարեցուցանելոյ զանձն իւր յառաջ քան զվախճան կենաց իւրոց առանց երևելի փաստուց Պատրիարգական Աթոռոյն և մեծագոյն գայթակղութեանց և շփոթութեանց ամ. ազգին Հայոց որք ընդ-

ամենայն տեղւս, եթէ հաճեսցի Նորին Բարձր Գերազանցութիւնն Ալեքսէյ Պետրովիչ Երմոլովն յանձն առնուլ զաշխատանս վասն կարծելոյ զմեր տարաձայնութիւն՝ 'ի գործ դնել զպատուիրելն միջնորդութիւն իւր առ Նորին Կայսերական Մեծութիւն և առ ժառանգն Տէրութեան Պարսից հովանաւորողն Պատրիարքական Աթոռոյ վասն ապահովացուցանելոյ զնա և զԱթոռն Էջմիածնի յաղագս այն ամենայն բռնաւորութեանց և յափշտակութեանց և սպառնալեաց իշխողաց Երևանայ անցելոց և ապագայից՝ և ամրացուցանելոյ զնա 'ի ներքոյ յատուկ խնամակալութեանց իւրոյ Արքայական Բարձրութեան ժառանգի Տէրութեան Պարսից, ունի նա վերադառնալ յաթոռ իւր ընդ ամենայն պարտաւորութեանց իւրոց առանց այլ ամենայն անձնական պատճառանաց.

Ողորմած Տէր՝ յայտնելով զայս ամենայն Ձերում Բարձր Գերազանցութեանն, ըստ իմում յատկացեալ պարտաւորութեանց՝ համարձակիմ յայտնել և զայն, զի Պատրիարքական Աթոռն ամենայն Հայոց որ յԱրարատ՝ գոլով յամենայն ազգի Հայոց որպէս կեդրոն մի՝ առ որ համահաւաքեալ ամենայն միաբանութիւն ազգին որք են բոլոր շրջանակս երկրաց գտանին տարածեալք, մարթացեալ են յետ վերջանալոյ թագաւորութեան իւրեանց նախ միայն պահպանել և ունել մինչև ցայսօր ժամանակի զարժանաւորութիւն ազգական ըստ ամենայն հարկաւորացն այնպիսի յատկութեամբ իւրեանց՝ որք և ծանուցեալ գտանին յամենայն ազգաց ընդ ամենայն տեղիս 'ի ներքոյ հովանաւորութեանց բազում տէրութեանց՝ ազգ մի և հասարակութիւն՝ ոչ անօգուտ և ոչ անարժան մարդասիրութեանց և բարերար հովանաւորութեանց տէրութեանցն որոց գտանինն հպատակք. ոչ անարժան գտանի, թէ և Բարձր Գերազանցութիւն Ձեր չունիցիք խնայել 'ի սմին պատահման զբարերարութիւն ձեր վասն միլիոնաւոր հասարակութեանց ազգի Հայոց և այնչափ հնագոյն Տաճարի Աստուծոյ և մեծահռչակ Պատրիարգական Աթոռոյ նորին, և յարգելի միջնորդութեամբ ձեր առ Նորին Կայսերական Մեծութիւն և առ ժառանգն Տէրութեան Պարսից, շնորհ ունիցիք պաշտպանել զազգն և զԱթոռն Հայոց յամենայն հետևեալ վտանգից կարծեցելոց կարելի հոգացողութեամբ և արժանաւոր տնօրէնութեամբ իւրեք ձերով ամրա-



ցու

ցուցանել 'ի ներքոյ առանձնական յատուկ հովանաւորութեան հովանաւորողի նոցին ժառանգի տէրութեան Պարսից Աբբաս Միրզայ Շահզադայի զՊատրիարգական Աթոռն Էջմիածնի և զհրաժարեալն յԱթոռոյ Պատրիարգութեան միայն վասն անտանելի նեղութեանցն յայտնեցելոց ծերունին Եփրեմ. հաւաստի է՝ թէ բաղում յօժարութեամբ իւրով յատուկ պարտաւորութիւն ինքեան համարելով, կամի նա ընդ հաճոյս ամենայն հասարակութեան ազգի Հայոց վերադառնալ յԱթոռ սուրբ Էջմիածնի.

Եւ ես եմ և մնամ խոկական պատրաստութ.

Ձերում Բարձր Գերազանցութեան

յամի 1824.
Նոյեմբերի 13.
'ի Թիֆլիզ.

Խոնարհ Ծառայ

Արք. Եպս. Հայոց Վրաստանու Ներսէս.

---

Պատասխանի Ներսէս Արք. Եպս.ին առ Բարձր Գերազանցն Կառավարչին Վրաստանայ.

Ձեր Բարձր Գերազանցութ.

Ողորմած Տէր

Ալեքսէյ Պետրովիչ.

Ընկալայ վերապատուութ. զգիր Բարձր Գերազանցութեան ձեր առ իս 'ի 29. անցեալ ամսեանն Հոկտեմբերի 3405. համարաւ, հանդերձ օրինակօքն գրութեանց անդամոց Սինհոդոսին Արարատեան Աթոռոյ ամ Հայոց և Սարտարին Երևանայ, որովք հրաւիրեն զԲարձր Գերազանցութիւն ձեր առնուլ



զմեզ

զմեզ առաքել առ ինքեանս զգումարս դրամոց ժողովեցելոց առ մեզ 'ի նուիրանաց ժողովրդոց Հայոց բնակելոց 'ի տէրութեան Ռուսաց և Օսմանցւոց առ հատուցումն պարտուց Աթոռոյն.

Ցաւիմ յոյժ՝ զի այսպիսի անվայելչութիւնք յանուն անդամոց Սինհոդոսին Արարատեան Աթոռոյ տարածանին 'ի լսելիս Բարձր Գերազանցութեան ձեր կամ մանաւանդ հեռաւորաց անծանօթից այժմեան կառավարութեանց այսմ Աթոռոյ ընդդէմ վերահռչակեալ արժանաւորութեանց նորին և վայելչութեանց հոգևորականութեանց ամ միաբանութեանց նորա ոչ միայն եղելոցն անդէն, այլև ամենեցուն որք գտանին արտաքոյ յամ վիճակս 'ի սահմանս իւրաքանչիւր տէրութեանց.

Այս պարտաւորիմ յայտնել ամ ճշմարտութեամբ ձերում Բարձր Գերազանցութեանն Ողորմած Տէր, զի սուտ են այն ամ գրութիւնք յանուն միաբանութեան Աթոռոյ Էջմիածնի. այլ որինչ ըստ հաճոյս իւր շարադրէ ինքն Սարտարն, զայնս տայ ստորագրել նոցա և տարածանէ առ ամենեսին՝ միայն 'ի վերայ իւրոց ցանկացեալ նպատակաց, մն ազատ կացուցանելոյ զինքն և զիւրսն յամ յինէն առ ձեզ և առ Ապպաս Միրզայ Շահզադայն բողոքեցեալ զվնասուցն Աթոռոյն. որպէս և յայտնի են յամ գրութեանց դրեցելոց յինքենէ առիս և 'ի հոգևորականաց Աթոռոյն սուտ 'ի Թէֆլիզ առ բազումս, և առ հասարակութեան Հայոց եղելոց 'ի տէրութեան Օսմանցւոց՝ յորս, զվնասապարտս Աթոռոյն ջանայ ապացուցանել զզօրս Ռուսաց և զբազմավիշտ ծերունին Եփրեմ: Եւ առ սոյն կարօղէք հաւաստի լինել յինքենէ 'ի Բարձրագահ Բէկլարբէկի Փաթալի խանէն, զի զԶաքարիա վարդապետ Թէֆլիզեցի քեռորդի հանգուցեալ Ինխաղ Սերէշքեար պաշէ Յովսէփին Բէհբուդեանց գոլով բանտարկեալ միայն վասն գրելոյ նորա առիս զծանօթութիւնս վասն հոգևորականաց ումանց առանց իւրոց հրամանաց, ազատեալ է զնա 'ի գնալն իւր յԷջմիածին ինքն Բէկլարբէկին. Եւ աւելի ևս քան զայն՝ կարօղէք լսել 'ի նորոց եկելոց յԷրևանայ յառաքեցելոց 'ի Ինխաղ Սավարսամիդզէն. զի վասն այսմ գրութեան յիշեալ վարդապետին որ գտանի ամենևին առանց իրիք պատկանաւորութեանց կառավարութեան

տէրու

տէրութեանն կամ Սարտարին կամեցեալ է Սարտարն արկա-նել ՚ի փախուստ և զԵփրեմ Արք Եպսն, համարելով թէ իցէ և նա կամակից այնմ դրութեան որ գտանի արտաքոյ իւրոց հրամանաց։ Սոցին համաձայն կարող էք նկատել վն սոյնպիսի նպատակաց Սարտարին և յայնմանէ՝ զի ՚ի հրովար-տակի Շահզադային առ յիշեալ Բէկլարբէկին այժմ վասն պարտապահանջից Էջմիածնայ առաքելոյն առ նա այսր՝ գրեալ լինի թէ առաքեցաւ ընդ նմ և Վրդպտ մի, այլ բե-րողն այնր հրովարտակի Գափարխանբէկ հաւատարիմն Սար-տարի՝ պատասխանէ թէ Վրդպտն եղեալ ընդ մեզ ՚ի միա-բանից Էջմիածնի հիւանդացեալ ՚ի ճանապարհի վերադար-ձաւ, որ է սուտ ամենևին. զի յառաջ քան զկատարումն ցան-կութեան իւրոյ՝ Սարտարն Երևանայ բաց յերկուց կամ յերից իւրոց կամարարաց, զայլ ոք ՚ի միաբանուեց Էջմիածնի ոչ բնաւ թոյլատրէ գալ աստ՝ զի մի և նք ընդ իս գտանիցին բողոքաւորք և հրապարակօղք բռնաւորութեանց և զանազան վնասապարտութեանց նր, ՚ի պատճառս որոց գտանի Պատրի-արգական Աթոռն ամ Հայոց ծանրապէս պարտաւորեալ, և Պատրիարգն ևս տարագրեալ և հրաժարեալ։ Եւ ոչ միայն այսչափ՝ այլև անդէն իսկ որսացեալ յիւր կամս զոմանս յԱրք Եպսաց խոստանալով պատրիարգացուցանել զնոսին, և զոմանս ՚ի Վարդապետաց այլևայլ յուսադրութբ՝ արկեալ է յամ միաբանութեան Աթոռոյն զմեծ տարաձայնութի, մինչև թշնամի միմեանց զամենեսին զնս կացուցանել։

Ողորմած Տէր՝ ամ միաբանութիք հոգևորականաց Արարատեան Աթոռոյն ը ամ կանոնաց միաբանութեան մէ և նոյն իրաւամբք գտանին պարտաւորեալ վն ամ պատկանե-լոցն միաբանութեան իւրեանց և Աթոռոյն. նոյնպէս և ամ հոգևորականք և մարմնաւորականք Հայոց որք ընդ ամ տե-ղիս, մի և նոյն իրաւամբք գտանին պարտաւորեալ վասն ամ պատկանելոցն հաւատոյ և եկեղեցւոյ իւրեանց կամ Պատրի-արգական Աթոռոյն և Պատրիարգին և կանոնաց նոցին։ Եւ տէրութիք իւրաքանչիւրոց՝ ոչ Ռուսաց, նոյնպէս և Պարսից և Օսմանցւոց վասն ամ պատկանելոցն հաւատոյ և կանոնաց



քրիս

քրիստոնէութեան կամ այլոց հաւատոց չունին զբռնադատութիւն 'ի դարուց ժամանակաց, որով և ամ հաստատեալ են իւրաքանչիւր ազգաց ընդ ամ տեղիս գտանին ապահովացեալք 'ի ներքոյ հովանաւորութեանց իւրաքանչիւր տէրութեանց որոց գտանին հպատակք։

Ապաքէն ես ինքն գոլով միաբան ընդ Էջմիածնի և նախաձայն անդամ Սինհոդոսին այնմ Պատրիարգական Աթոռոյ՝ համանգամայն և վիճակաւոր Արք Եպս բաւական բազմութեան ազգի Հայոց եղելոց աստէն 'ի ներքոյ տիեզերատարած հովանաւորութեան Ռուսաց, նոյնպէս և նախապատիւ Արք Եպսունք այնմ միաբանութեան գոլով յԱստրախան, 'ի Բեսարաբիա, 'ի Ղարաբաղ և յայլ տեղիս վիճակաւորք. և բազումք ես յԱրք Եպսաց և 'ի Վարդպտաց այնմ միաբանութեան գոլով վիճակաւորք 'ի տէրութեան Օսմանցւոց կամ 'ի յատուկ պաշտօնատարութեան այնմ Պատրիարգական Աթոռոյ. և բազումք ես յԵպսաց և 'ի Վարդապետաց գոլով արտաքոյ այնմ Աթոռոյ առ մեզ աստէն և առ այլս վիճակաւորս ըստ ամ տեղիս, զիարդ է կարելի՝ թէ եղեալքն անդէն յԱթոռն Արարատեան կարողասցին կամ յօժարակամութբ իւրեանց և կամ բռնաւորական յառաջադրութբ Սարտարին Երեւանայ լինէն կամ յայլոցն ամենեցուն խլել զիրաւունս միաբանական պարտաւորութեանց մերոց։ Կամ զիարդ է կարելի նց 'ի մէնջ յամենայն բազմութեանց հոգևորականաց և մարմնաւորականաց Հայոց խլել զիրաւունս ազգային պարտաւորութեանց առ հաւատն և առ եկեղեցին կամ առ օրէնս քրիստոնէութեանց մերոց։

Այլ զի Պատրիարգական Աթոռն Արարատեան գտանի 'ի ներքոյ կառավարութեանց Սարտարին Երեւանայ՝ վասն ամենայն պատկանելոցն Սարտարական կառավարութ իւրոյ նա ինքն Սարտարն դիտասցէ որպէս և հաճոյ եղիցի ինքեան. իսկ վս պատկանելոցն հաւատոյ կամ եկեղեցական և Պատրիարգական կառավարութեանց և կանոնաց նոցին, և կամ վս ամենայն իրաց և հաշուոց Պատրիարգական Աթոռոյն՝ որք գտանին ենթադրեալ իշխանութ քննական

կանո

կանոնաց Պատրիարգական Ս. Աթոռոյն, աւելորդ է նորին Բարձրագահութեան ձանձրացուցանելն զԲարձր Գերապատուութիւն ձեր կամ զժառանգն տէրութեան Պարսից և կամ զայլս՝ զանազան յօրինուածովք ստութեանց։

Օրէնք 'ի սկզբանէ են կառավարութեանց Պատրիարգական Ս. Աթոռոյն այսոքիկ. զի 'ի փոխանակել Պատրիարգի կամ կաթողիկոսի՝ կնքեն զամենայն զդրունս Էջմիածնի կաթողիկոսարանին և դանձարանի նորա կամ եկեղեցւոյն, և զամենայն զհաշիւս յատկացեալս Պատրիարգական կառավարութեանց։ Եւ միաբանք գտանեցեալք անդէն յԱթոռն կամ արտաքոյ 'ի զանազան Տէրութիւնս՝ իւրաքանչիւրքն 'ի վերայ իւրեանց յատկացեալ պաշտօնատարութեանց որպէս և գտանին կարգեալք 'ի Պատրիարգէ յառաջագոյն, մնան նոյնպէս մինչև ցյաջորդել նորոյ Պատրիարգի համաձայնութեամբ ամ հոգևորականաց և մարմնաւորականաց ընդհանուր ազգի Հայոց։ Իսկ այժմ մինչ Օծեալ Պատրիարգն ամ Հայոց ոչ գտանի փոխանեալ, այլ միայն հրաժարեալ վասն անտանելի նեղութեանցն իւրոց և անարգութեց և ծանր պարտաւորութեանց Ս. Աթոռոյն՝ որ է ամենևին արտաքոյ օրինաց Պատրիարգութեան Հայոց, նոր և առաջին օրինակ անծանօթ ամ հոգևորականաց և մարմնաւորականաց ազգի Հայոց. ես գոլով կարգեալ 'ի նմանէ յառաջ քան զհրաժարումն նորա Գլուխ և նախաձայն անդամ կառավարիչ ժողովոյն Արարատեան Ս. Աթոռոյ, յառաջ քան զօրհնութիւն ընդհանուր հաստատութեան ազգի Հայոց վասն Պատրիարգութեան Ս. Աթոռոյն Արարատեան՝ հոգևորականք, կամ մանաւանդ գերիք Սարտարին Երևանայ գտանեցեալքն անդէն յԱթոռն՝ չունին զիրաւունս պահանջելոյ յինէն կամ յայլոց զինչս կամ զհաշիւս պատկանեալս Պատրիարգական կառավարութեանց, զի արտաքոյ է այն օրինաց մերոց։ Ապա եթէ Սարտարն Երևանայ ոչ 'ի վերայ ամ իրաց և հաշուոց պատկանելոց Ս. Աթոռոյ Էջմիածնի կամ հոգևորականաց նորին կենդանեաց և ննջեցելոց եղելոց անդէն 'ի ներքոյ իշխանութեան իւրոյ. նոյնպէս և 'ի վերայ ամ իրաց և հաշուոց կամ հոգևորականաց եղելոց աստէն 'ի ներքոյ ամենաբարի հովանաւորութեց



իւր

իւրոյ Կայսերական Մեծութեան մեր Ռուսաց կարողասցէ տարածանել զբռնութի իւր, ձեր Բարձր Գերապանցութիւն կարէ զգացուցանել զայնմանէ ինձ և նմա։

Այլ ես վասն մեր պատկանելոյն ինձ 'ի վերայ միաբանական կամ ազգային եղբաւանց իմոց և կամ նոցա նշանակեցելոց 'ի վերոյ, ծանուցանեմ լիալիր հանգամանօք 'ի պատասխանի այնմ գրութեանց Սրբոյն եցաւելն անդամոց Սինհոդոսին Արարատեան Աթոռոյ առ Բարձր Գերապանցութի Ձեր, զի վասն հարկաւորացն յաղագս Պատրիարգութեան՝ Աթոռ զայնս գրութիս զորս ընկալեալ է ինքն ժառանգն Տէրութեան Պարսից 'ի ձեռն ձեր, քանզի ես գրեալ եմ ես առ ինքն Սարտարն և առ հասարակ միաբանութեց Աթոռոյ Էջմիածնի. Գրեալ եմ և առ Պատրիարգն Պօլսոյ և առ Արք Եպիսկոպոսունս Աթոռոյ Էջմիածնի որք 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Ռուսաստան, և առ այլս բազումս. այլ զի յայտնի է ինքեան Սարտալին՝ թէ հեռանալն յԱթոռոյ Էջմիածնի և հրաժարելն անդէն Օծեալ Կաթողիկոսի մեր Հայոց գոտե պատճառեալ միայն յանողորմ բռնակալութեանց իւր և իւրոցն մերձաւորաց. ոչ գտանի բացատրեալ մի առ մի յիմում բողոքագրի մատուցելոյ առ ձեզ և առ Հովանաւորն այնմ Աթոռոյ ժառանգն Տէրութ Պարսից յամին անցելոյ. Ջանք նորա կայանան միայն՝ զի զմեզ անվայելչութիւն յաղագս մեղի այնոցիկ կարողասցի շրջել 'ի վերայ իմ կամ այլոց, իբրու զի մեք եմք բռնադատօղ և հրաժարեցուցանօղ և արգելօղ սմանէն զվճռագնեալ ծերունին. զոր ոչ յամ ժամանակս բարերախտութեանց նորա 'ի լինելն Արք Եպս 'ի Ռուսաստան՝ և 'ի լինելն յԱթոռ Պատրիարգութ իւրոյ, նոյնպէս և այժմ 'ի տարաբախտ դրութեան իւրում ունիմ ես յատուկ մեծապատուութ իմով. մինչև միաբանութիւք Հայոց հասարակութեան ունիցին անօրինել զարժանաւորն վասն նորա և վասն Պատրիարգութեան մեր Հայոց և Պատրիարգական Աթոռոյն որ յԱրարատ։

Այլ և յայտնեալ եմ կանխաւ յառաջ Անդամոց Սինհոդոսին Պատրիարգական Աթոռոյ և մեր միաբանութեանց՝ թէ



բաց

քաո որում Աթոռն Էջմիածնի գտանի 'ի ներքոյ իշխանութեան Սարդարին, եւ չունիմ խառնել բնաւ 'ի կառավարութիւն այնպիսի՝ որք վերաբերին առ կառավարութիւն Սարտարի․ այլ վն ամ պատկանելոյն հաւատոյ, եկեղեցւոյ և Պատրիարքութեան Հայոց կամ Պատրիարքական Աթոռոյն՝ որք չունին զվերաբերութիւն առ մարմնաւոր կառավարութիւն, յայնս ամենեւին ոչ ոք յամ միաբանութեանց իւրեանց չունի զիրաւունս առաւել քան զես․ Ծանուցեալ եմ ընդ այնմ եւ՝ թէ յամ ժամանակս այնպիսի բռնաւորական յափշտակութեանց և անսահման կառավարութեանց, Աթոռն Արարատեան յամ Հայոց եղելոց 'ի Տէրութեան Ռուսաց բաց 'ի մոմոյ վասն լուսավառութեանց Տաճարին՝ զայլ որպիսի և իցէ նուէրանս չունի ստանալ բնաւ․ Իսկ վն ստացելոցն իսկ 'ի Հնդկաստանէ կամ 'ի Տէրութենէ Օսմանցւոց՝ պայմանեալ եմ, թէ աւելի քան որքան ստացեալ եմ, հասուցեալ եմ պարտատէրաց՝ որոց զմուրհակն ազատեալ ունիմ առ իս աւելի քան եօթանասուն և հինգ հազար Պարսից ռուպլի դումարաց․
Ծանուցեալ եմ և զայն՝ թէ առանց համաձայնութեան ամ հոգեւորականաց և մարմնաւորականաց Հայոց եղելոց յամ սահմանս Տէրութեան Ռուսաց և Օսմանցւոց օրինակ առնլով զեղեալսն յառաջագոյն համաձայնութբ նախանցեալ իշխողին Երեւանայ Մահմէտ Խանի և ինքնակոչ Դաւթի, չունի ոք զիրաւունս ըստ հաճոյս անձին իւրոյ կամ Սարտարին տնօրինել ինչ յաղագս Պատրիարքութեան․ Բայց 'ի վերայ այսր ամի գրուի ինձ առ Բարձր Գերազանցութիւն Ձեր՝ գտանի ամ զոչ ինչ լուեալ լինելն բնաւ 'ի մասին ամի այնորիկ․ և Սարտարին եւ չունելով զփոյթ վասն օգտի Աթոռոյն կամ ազգին՝ չարժէ զհոգեւորականսն առ ամ անփոյթութիւն․
Աւելի քան զայն ոչ կարողանամ ես բաւականացուցանել զնն ըստ ըղձի իւրեանց այլով ընդդէմ կանոնաց Հայոց և մերում սեպհական պարտաւորութեանց նշանակելոց 'ի վերայ․ Բարձր Գերազանցութիւն Ձեր տեղեկանալով վն ամ պատասխանատուութեանց խնդ ինձ մինչև ցայժմ ժամանակի, կարօղ էք ամ կամիք կարծել յայտնեալ զայս ձանձրալի



գըր

գրութիւն նշ. և թէ կամք իցեն սոյն այս գրութեան իմոյ օրինակին եւս յղել առ Սարտարն՝ չունիմ զիս ամաչեցուցանել առաջի նր. այն զի և ես ունիմ յղել առ անդամսն Սինհոդոսին և տարածանել առ ամ ազգն Հայոց ընդ ամ տեղիս վասն կատարելագոյն ծանօթութեանց ամենեցուն յաղագս ամենայն հարկաւորացն ՚ի մասին իմ և ՚ի զօր ամբաստանողացն զինէն.

Ողջ լեր և ես եմ և մնամ իսկական վերապատուէնուդ

Բարձր Գերազանցութեան Ձեր

1824. Նոյեմբերի 13.
՚ի Թիֆլիզ.

Խոնարհ Ծառայ

Արք. Առաջ. Հայոց Վրաստանու Ներսէս.

Կաթուղիկոս ԱՄ Հայոց

